

ՀԱՅԱՍՏ. ՍՈՑԻԱԼ. ԼՈՐՉՐԳ. ՀԱՆՐԱՊ. ԱՌՓՈՂԿՈՐԱՍ

№ 6 Դ Ա Ս Ա Դ Բ Բ Ե Բ Ի Ս Ե Բ Ի Ա № 6

Ք. Փ Ի Ր Ո Ւ Մ Յ Ա Ն

(ՏՐՈՊԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՐԵԿՏՈՐ)

Դ Ի Ս Պ Ա Ն Ս Ե Ր Ա Ց Ո Ւ Մ Ը

Յ Ե Կ

Պ Ա Յ Ք Ա Ր Մ Ա Լ Ա Ր Ի Ա Յ Ի Դ Ե Ս

(ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

615.9  
Փ-66

ՊԵՏԱԿԱՆ 1935 ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

28 AUG 2010

ՀԱՅԱՍՏ. ՍՈՑԻԱԼ. ԽՈՐՀՐԳ. ՀԱՆՐԱՊ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏ

№ 6 Դ Ա Ս Ա Դ Բ Գ Ե Բ Ի Ս Ե Բ Ի Ա № 6

616.9

Փ-66

այ

Բ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

(ՏՐՈՊԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ)

976  
36070  
02.09.2007

ԴԻՍՊԱՆՍԵՐԱՑՈՒՄԸ  
ՅԵՎ  
ՊԱՅՔԱՐ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ

(ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



ՄԵՏՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

Խմբագիր՝ ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ Ա. ՔԱԼԱՇՅԱՆ

### Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Գրքույկը կազմված է տրոպիկամարկների, ինչպես և մալարիայի դեմ մղվող պայքարի խնդիրներով շահագրգռված բոլոր բժիշկների համար: Նա նպատակ չունի մանրամասն քննութայան յենթարկել առհասարակ դիտարաներացման վերաբերող ու նրա հետ կապված խնդիրների վրա կոմպլեկսը, նրա սխտեմն ու մեթոդները:

Այդ հարցերը բավական լրիվ կերպով լուսաբանված են միութենական առողջապահական դրակառնութայան մեջ: Մեր առաջ դրված խնդիրն ավելի սահմանափակ ու համեստ է. մեր ցանկությունն է տալ համառոտ դիտողություններ այն մասին, թե ինչպես պիտի կիրառվեն դիտարաներացման սկզբունքները մի նեղ ասպարիզում՝ մալարիայի դեմ պլանային ու սխտեմատիկ պայքար մղելու գործում:

Մեր այս փորձն իդուր չենք համարում այն նկատառումով, վոր հակամալարիային պայքարի բնագավառում դիտարաներացումը դեռ համեմատաբար նոր յերևույթ է և հետևաբար առողջապահական դրակառնութայան մեջ նրան վերաբերող նյութերը բավական սակավ են: Այդ և մյուս կողմից լեզվի հետ կապված դժվարությունների պատճառով չըջաններում աշխատող բժիշկները հաճախ հնարավորություն չեն ունենում ձեռք բերել այդ նյութի մասին վորևէ աղ-

Գլավլիտ 167, հրատ. 3287, պատվ. 323 տիրամ 1000

Հանձնված և արտադրություն 19 մարտի 1935 թ.

Ստորագրված և տպագրելու 26 ապրիլի 1935 թ.

Պետհրատի տպարան, Յերևան.

բյուր: Այդ յերևում է մասնավորապես այն բազմաթիվ հարցումներին, վոր մենք բանավոր ու գրավոր ձևով շարունակ ստանում ենք չըջանների ընկերներին:

Յեթե այս գրքույկը վորոչ չափով կարողանա լրացնել այդ բացը, մենք միանշամայն բավարարված կլինենք: Միևնույն ժամանակ մենք շնորհակալությամբ կընդունենք այն բոլոր նկատողություններն ու ուղղումները, վորոնք հավանորեն կլինեն տեղերում աշխատողների կողմից մեր առաջադրությունները կոնկրետ աշխատանքի պրոցեսում ստուգելուց հետո:

I

ՄԱԼԱՐԻԱՅԻ ԳԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առողջապահության ասպարիզում Յերկրորդ հնգամյակի համար առաջադրված խոշորագույն խնդիրներից մեկն, անշուշտ, մալարիայի լիկվիդացիան պիտի համարել:

Այդ առավելապես վերաբերում է Հ.Ս.Խ. Հ.-ի նման հանրապետություններին ու մարզերին, ուր բոլոր մյուս հիվանդությունների շարքում մալարիան մի ընդհանուր ֆոն է հանդիսանում, վորչափ այդ հիվանդությունը թե՛ իր տարածությամբ և թե՛ հասցրած վնասներով՝ առաջին տեղն է գրավում:

Այդ ապացուցում են հենց Հ.Ս.Խ. Հ.-ին վերաբերող հետևյալ թվերը:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ	Դիմողների թիվն ըստ տարիների					
	1931 թ.		1932 թ.		1933 թ.	
	Թիվ	10,000 բնակչ.	Թիվ	10,000 բնակչ.	Թիվ	10,000 բնակչ.
Մալարիա . . . . .	102533	967,2	113061	1025,3	156659	1394,1
Գրիպ . . . . .	58184	548,4	68129	572,5	78686	699,8
Տրախոմա . . . . .	18932	178,6	188872	171,1	17708	157,6

Սակայն, դիմողները կազմում են փաստորեն վարակվածների վոչ ավելի քան միայն մի յերրորդ մասը, վորոնց թիվը հասնում է մոտ կես միլիոնի: Այստեղից էլ արդեն պարզ է, թե ինչքան խոշոր է այն վնասը, վոր անընդհատ հասցնում է մալարիան՝ ժողովրդական անտեսությանը:

Մի կողմ թողնելով նրա պատճառած այլ բազմատեսակ վնասները, բավական է նշել միայն, վոր ամեն մի հիվանդ տարվա ընթացքում, կորցնում է միջին թվով տասը բանվորական ուր և հետևաբար մեր հանրապետության համար յուրաքանչյուր տարի կորչում է միլիոնից շատ ու շատ ավելի աշխատանքի ուրեր, վորը բնականաբար չի կարող չանդրադառնալ սոցիալիստական շինարարության տեմպերի ու արդժիւնյալանների ժամանակին կատարելու վրա:

Այսոր՝ առողջապահության ամբողջ կազմակերպության և մասնավորապես հակամալարիային հիմնարկությունների առաջ ծառանդում է մի հասկայական խնդիր՝ իսկական ըրլչեիկյան վճռականությամբ և տեմպով ձեռնարկել մալարիայի դեմ պայքարելու գործին, և մինչև յերկրորդ հնգամյակի վերջն ապահովել մալարիայի՝ վորպես սոցիալական մեծ չարիքի լիակատար լիկվիդացիան:

Դրա համար նախ և առաջ հարկավոր է

վերանայել ու վերամշակել այն մեթոդները, վորոնցով գինված պետք է վճռական ճակատամարտի յեղնել մեր աշխատավորության դարավոր թշնամու դեմ, հարկավոր է պարզ գծել ու ճշտել այն ուղիները, վորոնք կարող են ավելի հեշտ ու ամենակարճ ժամանակամիջոցում ամենի մեզ դեպի հաղթանակ: Ահա այդ մեթոդների և ուղիների մասին էլ պիտի լինի մեր խոսքը:

Իսոյց նախքան այդ նյութին անցնելը, անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել այն մասին, թե ինչպես պիտի հասկանալ մալարիայի լիկվիդացիայի իմաստը, մասնավորապես վոր դրա վերաբերյալ կան տարբեր տեսակետներ:

«Մալարիայի լիկվիդացիա» ասելով, վորմանք խնդիրը ներկայացնում են այնպես, վոր մեր նպատակն է վերացնել մալարիայով վարակվելու նոր դեպքերի հնարավորությունը, վորչնչացնելով վարակը տարածողի (մոծակի) դարգացման ու բազմացման բոլոր տեղերը, իսկ այդ 100 0/0-ով իրադործելու անհնարի-նության դեպքում— վորչնչացնելով իրեն՝ վարակողին թե թրթուրային և թե նրա զարգացման այլ փուլերում: Մյուսների կարծիքով՝ դա խնդրի միայն մի մասն է կազմում. դրա հետ միասին, անհրաժեշտ է հավասարապես աշխատանք կատարել արդեն վարակված մարդկանց բուժելու, նրանց որդանիզմը մա-

լարիայի պարագլխի նկատմամբ ստեբիլիզացիայի յենթարկելու ուղղությամբ. հակառակ դեպքում, մենք չենք կարողանա իսպառ վերացնել մալարիայի պատճառով առաջացող բացասական յերևույթները, նրա հասցրած վնասները՝ հիվանդների նկատմամբ:

Մենք գտնում ենք, վոր ճիշտ պիտի համարել յերկրորդ տեսակետը, և ուրեմն հակամալարիային միջոցառումների շարքում, հիվանդների բուժումը պիտի գրավի կարևոր տեղ, մանավանդ, վոր հենց պայքարի ընթացքում մեծ չափով կնպաստի թարմ վարակումների նվազմանը, պակասեցնելով այն մարդկանց թիվը, վորոնք կարող են աղքատը հանդիսանալ մոծակների և նրանց միջոցով՝ առողջ մարդկանց վարակելու համար:

Հարցն այսպես դնելով, արդեն մենք հիմնականում կանխորոշում ենք այն միջոցառումների ընդհանուր ընույթը, վորոնք յայն չափով պիտի կիրառվեն, հետագա աշխատանքների ընթացքում:

Յեթե հիմա մի հետադարձ հայացք ձգենք մալարիայի դեմ մղվող պայքարի անցած ետապների վրա, պետք է անպայման ընդունենք, վոր մեր զարգացման ներկա շրջանն ու նրա առաջադրած խնդիրները պահանջում են աշխատանքի ձևերի հիմնական վերակառուցում: Հին ձևերն իրենց արդյունքներով այլևս չեն բավարարում սոցիալիստական չի-

նարարության այժմյան տեմպերին, նրանց մեջ ստեղծվում է ճեղքվածք, վորն անհրաժեշտ է վերացնել շուտափուլ կերպով: Այդ ձևերի վերադնահատումը, նոր, ժամանակակից պահանջների համաձայն, հիմք է տալիս մեզ պնդելու, վոր մալարիայի դեմ պայքարն այսօր պետք է վերակառուցվի ծավալուն դիսպանսերացման հիմունքներով:

Պետք է ասել, վոր այդ սկզբունքներն առհասարակ խորթ չեն ՀՍՈՒՀ տրոպիկական (հակամալարիային) կազմակերպության համար: Դիսպանսերացման առանձին ելեմենտները, ինչպես և նրանց վորոչ կոմպլեքսը, միշտ այս կամ այն չափով կիրառվել են տրոպիկաներկների առօրյա աշխատանքների ընթացքում: Նրանք առաջինն են յեղել, վոր ՀՍՈՒՀ-ի սահմաններում գործնականորեն կիրառել են դիսպանսերացման սկզբունքները և դա յե յեղել նրանց մինչև այժմ ունեցած հաջողությունների պայմաններից մեկը:

Սակայն, խոշոր տարբերություն կա (թե քանակական թե վորակական) դիսպանսերացման առանձին ելեմենտներն այս կամ այն չափով կիրառելու և այն մասսայական ու ծավալուն ձևով անցկացնելու միջև: Այսօր մեկից պետք է անցնել մյուսին: Յերկար տարիների փորձը հեշտացնում է տրոպիկաներկի աշխատանքների նման վերակառուցումը: Պա-

տահալանը պիտի դառնա աշխատանքի հիմ-  
նական մետոդ, առանձին ելեմենտները պետք է  
ձուլվեն մի ընդհանուր սխեմեմի մեջ և կադ-  
մեն պլանային աշխատանքների գլխավոր,  
վճռական ողակը, վորոնք պիտի հանդիսանան  
համաձայնեցրված ու իրար լրացնող հակա-  
մալարիայի միջոցառումների մի կոմպլեկս:

## II

### ԳԻՍՊԱՆՍԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Վերևում արդեն շեշտվեց, վոր գիսպան-  
սերացման լայն ու սխեմեմատիկ կիրառումը  
տրոպիկամարկիների ամենաայժմեական խնդիր-  
ներից մեկն է. նա միայն կարող է ապա-  
հովել մալարիայի լիկվիդացիայի հետ կապված  
աշխատանքների պլանաչափ կատարումը՝  
մաքսիմալ եֆֆեկտավորությամբ:

Բայց նշանակո՞ւմ է այդ արդյոք, վոր ամեն  
մի տրոպիկամարկ կամ այլ առողջապահա-  
կան հաստատություն անմիջապես և միանգա-  
մից պիտի ձեռնարկի դիսպանսերացման գոր-  
ծին՝ նրա սպասարկմանը հանձնված ամբողջ  
չրջանի կամ յենթաչրջանի բոլոր արդյունաբե-  
րական ձեռնարկների, հիմնարկների ու կոլխոզ-  
ների վերաբերմամբ: Վ՛ո՞չ մի դեպքում: Ընթա-  
նալ այդ ուղիով, կնշանակէ հենց սկզբից գոր-  
ծը մատնել անհաջողության: Դիսպանսերացու-

մը մի աշխատանք է, վորը պահանջում է ժա-  
մանակ, ձեռնահաս ուժեր ու մանրակրկիտ և  
ուշադիր վերաբերմունք: Նա հաջողությամբ  
կարող է կիրառվել այն ժամանակ միայն,  
յերբ ձեռնարկված աշխատանքների ծավալը  
չի գերազանցում յեղած հնարավորություն-  
ներին՝ առաջին հերթին յեղած ուժերի քանա-  
կի և վորակի նկատմամբ:

Այսոր դեռ դժվար է ասել, թե ինչպիսի  
նորմատիվներով պիտի դեկավարել այդ աշ-  
խատանքները ձեռնարկելիս, թե միջին թվով  
քա՞նի աշխատավոր կամ ինչպիսի տերիտորիա  
կարող է միանվագ ընդգրկել ամեն մի բժիշկ  
և այլն. դրա համար նախ մենք՝ չունենք անց-  
յալի փոքր ի շատե լայն փորձ, իսկ յերկրորդ՝  
այստեղ խոչոր նշանակություն ունեն թե մա-  
լարիայի տարածման չափը և թե միջավայրի  
պայմանները:

Ուստի այդ նորմաները պետք է մշակել ու  
ճշտել հենց կատարվելիք աշխատանքների  
ընթացքում: Հաջող արդյունքների հասնելու  
համար, անհրաժեշտ է գործն սկսել համե-  
մատաբար ավելի փոքր կոնտինդենտի հետ,  
վերցնելով ամեն մի բժիշկի համար 300-500 աշ-  
խատավոր (բանվոր, կոլխոզնիկ), և տեխնի-  
կային տիրապետելու ու փորձ ձեռք բերելուց  
հետո միայն, ընդգրկել ավելի խոչոր մասսա-  
ներ: Պարզ է ուրեմն, վոր սպասարկման չրջա-  
նում դրանվող աշխատավորության մեջ պետք

ե կատարել ընտրութիւն, նրանց առաձին խմբերի ու խավերի համար պետք է սահմանել վորոչ հերթականութիւն: Ընտրութիւնը կատարելու ժամանակ աչքի առաջ պիտի ունենալ՝

ա) մալարիային վարակվածութեան ու մալարիայով վարակվելու հնարավորութեան չափը:

բ) տվյալ արդյունաբերական ձեռնարկութեան կամ այլ հիմնարկ-ձեռնարկութեան նշանակութիւնը ժողովրդական տնտեսութեան և տվյալ շրջանի եկտնտմիկայի համար:

գ) մի շարք այլ մոմէնտներ, վորոնք տվյալ պայմաններում ունեն վորոչ քաղաքական կամ այլ նշանակութիւն:

Յեթե հնարավոր չի միանգամից ընդգրկել գոյութիւն ունեցող արդյունաբերական ձեռնարկութեան բոլոր աշխատավորներին, անհրաժեշտ է դիսպանսերացման յենթարկել առաջին հերթին այն ցեխերը, վորոնք արդյունաբերութեան այդ ճյուղի համար ունեն առաջատար նշանակութիւն: Նույնը պիտի անել նաև գյուղատնտեսութեան սեկտորում, մասնավորապես խորհրդային և կոլեկտիվ տնտեսութիւնների վերաբերմամբ այն տարբերութեամբ, վոր այստեղ նույն խորհրդային կամ կոլեկտիվ տնտեսութեան նկատմամբ նպատակահարմար է հերթականութիւն սահմանել վոր թե ըստ ցեխերի, այլ ըստ բնակա-

վայրերի կամ նրանց առանձին թաղամասերի: Հավասար նշանակութիւն ունեցող որչեկտներին առաջին հերթին պիտի ընդգրկել այնպիսիները, վորոնք ավելի յեն վարկված կամ վտանգված մալարիայի տեսակետից:

Ղեկավարվելով վերևում հիշված սկզբունքային դրույթներով, առանց վորևէ զժվարութեան կարելի յէ կազմել դիսպանսերացման կիրառման հերթականութեան ծրագիր և հետևյալ որչեկտին անցնել միայն այն ժամանակ, յերբ նախորդն արդեն լիովին ընդգրկված է: Անհրաժեշտ է, վոր այդ ծրագիրը նախորդ համաձայնեցված լինի տեղի ղեկավար մարմինների հետ: Աշխատանքների հետագա զարգացումը, հավանականորեն փոփոխութիւններ կմտցնի նախնական պլանի մեջ:

Պլանը կազմելուց հետո, հարկավոր է անցնել անմիջական դիսպանսերացմանը, վորը բաղկացած պիտի լինի հետևյալ հիմնական մոմէնտներից՝

1. Աշխատավորութեան հետագոտումը մալարիայի տեսակետից:

2. Միջավայրի մալարիային ետիպեմիտրոգիական հետադոտութիւնը և հայտնաբերած Ֆակտորների հաշվառումը:

3. Բնակչութեան և միջավայրի հետադոտութեան արդյունքների միջև յեղած կապի պարզումը:

4. Ստացած նյութերի ու ավյալների հիման վրա հակամալարիային միջոցառումներ գործադրելու պլանի մշակումը:

5. Մշակած պլանի սխեմատիկ իրագործումը:

6. Ձեռնարկած միջոցառումների արդյունքների ուսումնասիրությունը: Դիսպանսերացման թված ողակներն ավելի պարզ պատկերացնելու համար, կանգ առնենք նրանցից ամեն մեկի վրա առանձին:

### ա. Աւստրալորու թյան հետազոտում

Աշխատավորութան հետազոտումը մալարիայի տեսակետից, նպատակ ունի առանձնացնել մալարիա ունեցողներին առողջներից և կազմել ընդունված բոլոր ինդեկսները՝ անամնատիկ, փայծաղային, պարազիտար, Բոսսի, ենդեմիկ և հավանական:

Ինդեկսների հայտնաբերումը մասնավորապես հարկավոր է թե մալարիայի տարածման չափը պարզելու և թե հետազոտում պայքարի արդյունքները գնահատելու համար:

Հետազոտման ժամանակ՝ մալարիայով հիվանդ պետք է հմարել այն բոլոր անձանց, վորոնք ունեն մալարիայի մի կամ մի քանի որյեկտիվ արտահայտություններ, իսկ նրանց բացակայությունը գեպրում՝ յերբ անամնեզը մալարիա յե ցույց տալիս:

Մալարիայի որյեկտիվ նշաններ են հա-

մարվում առաջին հերթին մեծացած փայծաղը և պարազիտի ներկայությունն արյան մեջ: Հետազոտման ժամանակ, փայծաղի քննում պետք է կատարել բոլոր դեպքերում: Մեր պայմաններում չնչին սխալ արած կլինենք, յեթե ամեն անգամ փայծաղի մեծացումը վերագրենք մալարիային, քանի վոր համեմատաբար լիչ են պատահում այնպիսի քրոնիկական ինֆեքցիոն կամ այլ հիվանդություններ, վորոնց ժամանակ փայծաղը մեծացած է լինում (լեյշմանիոզ, բրուցելոզ և այլն): Այնուամենայնիվ հիվանդության թե սուր և թե լատենտ դեպքում պետք է աչքի առաջ ունենալ այդ հրնարավորությունը և աշխատել վորքան կարելի յե ճշտությամբ դիֆերենցել այդ:

Պարազիտներ հայտնաբերելու համար, արյան քննումը նույնպես անհրաժեշտ պիտի համարել, մանավանդ այն հիմնարկությունների համար, վորոնք լաբորատորիաներ ունեն:

Սակայն, լաբորատոր անալիզների կատարման դժվարությունը կամ անհնարին լինելը, յերբեք չի կարող կասեցնել դիսպանսերացման աշխատանքները: Այդ դեպքում՝ որյեկտիվ նրչաններից պետք է հենվել հիմնականում՝ փայծաղի վրա:

Բացի դրանից, անհրաժեշտ է նկատի ունենալ թե հետազոտվողի արտաքին տեսքը և թե նրա սուրյեկտիվ դանդառները, վորոնք խոչոր նշանակություն են ունենում, մանավանդ

փայծաղի նորմալ լինելու ու պարագլխոսների  
բացակայութեան դեպքում: Յեթե մեծացած  
փայծաղը կամ պարագլխոսի առկայութեանն ըն-  
դունված է վորպես մալարիայով հիվանդ լի-  
նելու ապացույց, ապա նրանց բացակայու-  
թյունը շատ դեպքերում դեռ չի կարող ժխտել  
հիվանդութեան առկայութեանը: Մենք գի-  
թենք բազմաթիվ դեպքեր, յերբ արտաբնական  
մալարիայի սկզբնական շրջանում, ինչպես նաև  
բոլոր ձևերի մալարիայի վոչ լիակատար  
բուժման դեպքում չի լինում վոչ մեծացած  
փայծաղ, վոչ էլ պարագլխոս պերիֆերիկ ար-  
յան մեջ, մինչդեռ հարուցիչը գտնվում է ներ-  
քին որգաններում և շարունակ վտանդի տակ  
է պահում հիվանդին: Նման դեպքերում անա-  
մեկը խոշոր նշանակութեան են ստանում և  
նա յե հանդիսանում միակ չափանիշը, վորի  
հիման վրա վորոշվում է տվյալ անհատի հի-  
վանդ կամ առողջ լինելը:

Այստեղ հետազոտողի առաջ խնդիր է դր-  
վում պարզել այդ հարցը, աշխատելով հարց  
ու փորձի միջոցով վորոշել յեղած հիվանդու-  
թեան բնույթը, քանի վոր շատ հաճախ հի-  
վանդները չեն կարողանում միշտ տարբերել  
մալարիայի նոսրման մի այլ տեսղային հի-  
վանդութեանից:

Իսյց անամենեղը կարող է պարզել մալարի-  
այի նոսրայի լինելն անցյալ ամբողջ ժամա-  
նակաշրջանի նկատմամբ: Հարկավոր է արդյոք  
ներկայումս հիվանդ համարել բոլոր ա՛յն մար-

կանց, վորոնք յերբեիցե ունեցել են մալարի-  
այի նոսր, իսկ այժմ չունեն վոչ մեծացած  
փայծաղ վոչ պարագլխոս: Վոչ, դա խիստ կբար-  
դացներ աշխատանքները: Դրանից խուսափելու  
համար սահմանվում է պայմանական հասկա-  
ցողութեան՝ «գործնականում առողջ» տերմի-  
նը: Պայմանականորեն ընդունվում է, վոր  
գործնականում առողջ պիտի համարել այն բո-  
լոր անձանց, վորոնք տվյալ մոմենտին չունեն  
հիվանդութեան (մալարիայի) վորևե սբյեկ-  
տիվ նշան և անցած վերջին յերկու որացույ-  
ցային տարիների ընթացքում չեն ունեցել մա-  
լարիայի նոսր (որինակ՝ 1934 թ. ընթացքում  
հետազոտվողներից առողջ պիտի համարվեն  
նրանք, վորոնք 1932 և 1933 թվերին նոսր  
չեն ունեցել): Իհարկէ, մենք գիտենք, վոր շատ  
են լինում խրոնիկական մալարիայի դեպքեր,  
յերբ վոչ թե յերկու, այլ ավելի շատ տարինե-  
րի ընթացքում հիվանդութեանը կարող է վոչ  
մի կերպ չարտահայտվել (վոչ սբյեկտիվ և  
վեչ էլ սուբյեկտիվ ձևով) և հետո ակտիվ,  
սուր բնույթ ստանալ: «Դործնականում առ-  
ողջի» ( ПРАКТИЧЕСКИ ЗДОРОВЫЙ ) հաս-  
կացողութեանն այդ չի ժխտում, նա միայն ա-  
վելի կոնկրետացնում և հեշտացնում է աշխա-  
տանքը: Դրա պահանջը կվերանա միայն այն  
ժամանակ, յերբ գիտութեանը կգտնի մի մի-  
ջոց, վորով կարելի կլինի ճշտութեամբ և  
վճռականորեն պնդել կամ ժխտել մալարիայի

1003  
36070



պարագիտի առկայութիւնը հետազոտովոյ ան-  
ձի մեջ:

Հետազոտման ժամանակ ստացված տվյալ-  
ներն անհրաժեշտ են հետագա աշխատանքների  
համար, մասնավորապես նրանք յեղակեա պի-  
տի հանդիսանան դիսպանսերացման արդյունք-  
ները պարզելու համար: Դրա համար ել նրանք  
պետք է միշտ ձեռքի տակ լինեն՝ տվյալ հիմ-  
նարկութեան մեջ, ամբողջ հավաքված մի տեղ,  
մի հատուկ դրքում կամ տետրակում: Նույն  
նյութերի հիման վրա պիտի կազմվեն մալարի-  
այի և եպիդեմիոլոգիական ինդեքսները: Այդ  
նպատակով հետազոտութեան արդյունքները  
պիտի արձանագրվեն վորոշ կարգով:

Հարմար ենք համարում առաջարկել հե-  
տազոտվողների հետեյալ հարցացուցակը՝ (տես  
մյուս յերեսի ցուցակը):

Հարցացուցակին հարկավոր է ավելացնել  
լրացուցիչ սյունյակներ այն դեպքում, յերբ  
հետազոտողն անհրաժեշտ է համարում ստա-  
նալ նաև այլ հետագա աշխատանքների համար  
անհրաժեշտ տվյալներ: Որինակ՝ յեթե անցյա-  
լում արդեն կիրառված է դիսպանսերային բու-  
ժում կամ վորեւ պրոֆիլակտիկ միջոցառում  
(պրոֆիլիինացում, պոլիդեիդացիա, բնակա-  
րանի ցանցապատում), նպատակահարմար է  
այդ մասին ևս տեղեկութիւններ հալաքել: Հե-  
տազոտութեան ժամանակ շատ անգամ հնարա-  
վոր և նույնիսկ անհրաժեշտ է լինում պար-  
զել վոչ միայն մալարիայի առկայութիւնը,

(պլուզի, ցեխի, ազգայնակ խմբակի անունը) և  
 տաղտութեան արդյունքները: Անհատավորութեան բնագծանոց թիվը ..... , նրանցից  
 հետազոտված է ..... այսինքն ..... 193 թ. հետազոտ-  
 ությունը կատարել է բժիշկ .....

Պատկեր թիվ	Պատկերի նկար		Պատկերի նկար											
	Պատկերի նկար													
1	Պատկերի նկար													
2	Պատկերի նկար													
3	Պատկերի նկար													

այլև ուսումնասիրել մի շարք այլ պարագիտար հիվանդությունների տարածվածությունը: Ահա այդ դեպքում ևս պետք է ավելացնեն համապատասխան հարցեր:

Հարցացուցակը լրացնելիս՝ յերրորդ կետը պետք է լրացնել միայն մինչև մեկ տարեկան յերեխաների համար, իսկ ավելի մեծերի վերաբերյալ՝ (կ. 4) հարկավոր է նշել միայն լրջացնելիս յուրաքանչյուր պարագիտի վերաբերյալ պետք է լրացնել միայն մի կետ (Գա. Ծիզ). խաչ պետք է դնել «չիզոնտ» սյունյակում այն դեպքում, յերբ դամեաները բացառկայում են և արյան մեջ գտնվել են պարագիտի ձևերից վորեև մեկը՝ կամ մի քանիսը: Իսկ յեթե դամեաներ են հայտնաբերվում այդ դեպքում խաչ է դրվում միայն «դամեաներ» սյունյակում:

Հետազոտությունը վերջացնելուց հետո, հարկավոր է կազմել բոլոր ինդեքսները (ոգտրվելով նրանց Փորմունքներից), այսինքն՝ առանձնատիկընդհանուրը և առանձին վերջին յերկու որացուցային տարիների համար, փայծաղին, ընդհանուր պարագիտար և առանձին գամետային, Ռասսի ու Ենդեմիկ: Այդ ինդեքսներն առանձնապես հարկավոր են հետազոտում մալարիայի դինամիկան ու կիրառված հակամալարիային միջոցառումների արդյունքները պարզելու համար:

Հետազոտության ժամանակ, հարցացուցակը լրացնելու հետ զուգնթաց անհրաժեշտ է ամեն մի հայտնաբերած հիվանդի («գործնականում առողջ» չճանաչվողի) համար լրացնել հատուկ մալարիային քարտ: Հետազոտում Առտողիմատի կողմից համապատասխան ձևվի դիսպանսերացման քարտեր պատրաստելուց հետո, պիտի լրացնել այդպիսիները:

Աշխատավորության հետազոտումը պետք է կատարել այնպես, վոր այդ պատճառով աշխատանքի ժամերի կորուստ չլինի: Արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկներում և յտրհանտեսություններում խնդիրը պետք է համաձայնեցնել վարչության հետ: Յեթե բուժհիմնարկը մոտ է գտնվում ձեռնարկին, կարելի յե վաղորոք կազմած պլանով բանվոր ծառայողների առանձին խմբեր հրավիրել այնտեղ քննության համար:

Աշխատանքի վայրերի ցրվածության դեպքում՝ հարկավոր է հետազոտություն կատարելու կետը մոտեցնել աշխատավորներին, քրնության յենթարկել ըստ ցեխերի, չրջանների, սեկտորների, ժամանակավորապես հարմարեցնելով դրա համար վորեև սենյակ կամ տաք յեղանակին՝ հատուկ վրան պատրաստել:

Բանվորների հանրակացարաններում և կոլտնտեսություններում նպատակահարմար է հետազոտությունը կատարել տներում, ընտրելով դրա համար որվա այն ժամերը, յերբ աշխատավորները տանն են լինում:

Արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկներում և խորհանտեսություններում, իսկ վորոշ դեպքերում նաև կուլտնտեսություններում, հաճախ հարմար է լինում քննությունը կատարել ընդմիջումներին, հանդստի ժամերին: Այս ուղղությամբ դժվար է տալ վորևէ այնպիսի բեցեպտ, վորը կիրառելի լինի բոլոր պայմաններում: Հետազոտողները պետք է ամեն մի կոնկրետ դեպքում հաշվի առնեն յեղած հնարավորությունները և հարմարությունները և այնպես տանեն գործը, վոր աշխատավորներին աշխատանքից չկտրելուց բացի, կարողանան նաև վորքան կարելի յեկարճ ժամանակում վերջացնել հետազոտումը:

Հետազոտությունների (ինչպես և դիսպանսերացման բոլոր աշխատանքների) ընթացքում անհրաժեշտ է ամենամոտ մասնակցության հրավիրել տվյալ հիմնարկ-ձեռնարկում կամ շրջանում աշխատող ամբողջ առողջապահական անձնակազմը: Սոցոր ոժանդակություն կարող են և պետք է ցույց տան տեղի սկզբնական կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները. թե ի՞նչպես և ի՞նչ հաջողությամբ կկազմակերպվի այդ ոժանդակությունն ու ոգնությունը, այդ գլխավորապես կախված է դիսպանսերացում կիրառող հիմնարկի ղեկավարների ընդունակություններից:

### բ. Միջավայրի պայամանների ուսումնասիրությունը

Միջավայրի ուսումնասիրության համար պետք է հետազոտել՝

- ա. կլիմայական պայմանները.
- բ. Զրային ֆակտորը
- գ. Մոծակներին.
- դ. Աշխատանքի և կենցաղի պայմանները:

1. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ նպատակ ունի պարզել, թե վոր ամիսների ընթացքում և տեղի ունենում թե՛ մալարիա տարածող մոծակների և թե՛ նրանց մարմնում պարազիտի ապորոզոնիզցիկի վարզացումը: Այստեղ առաջին հերթին պիտի ոգտագործվեն տեղում յեղած ողյսերեվութթաբանական կայանի տվյալները:

Տեղում նման կայանի բացակայության դեպքում կարելի յե ոգտվել մի այլ կայանի տվյալներից, վորը գտնվում է այլ, բայց ընդհանուր առմամբ նման կլիմայական պայմաններ ունեցող շրջանում: Իսկ յեթե այդպիսին ել չկա, այն ժամանակ պետք է այդ ուղղությամբ կազմակերպել սիստեմատիկ դիտողություններ:

Ողյսերեվութթաբանական կայաններում կուտակվող տվյալներից մալարիայի տարածման տեսակից գլխավորապես հարկավոր են տարբեր ամիսների ընթացքում յեղած միջին ջեր-

մությունը, խոնավությունը (հարաբերական) և տեղումների քանակը: Թեև կլիմային վերաբերող այդ տվյալները բոլոր տարիների ընթացքում նույնը չեն լինում բայց և այնպես նրանց տատանումները շատ մեծ լինել չեն կարող: Համենայն դեպս հետազոտողը պետք է տեղեկություններ վերցնի բՊՈՐ ամօցած տարիների վերաբերյալ (վորջան այդ հնարավոր է) որինակ՝ հետևյալ աղյուսակի համաձայն՝

19 .....թ.

№	ԱՄԻՍՆԵՐ	Միջին ջերմությունը բոլոր օրերի	Միջին հասարակածային խոնավութ. (0/0)	Տեղումների քանակը միլիմետրներով	Գլխավոր թյուն
	I				
	II				
	III				
	IV				
	V				
	և այլն				

Այդ տեղեկությունները հիմք կձառայեն նախատեսներու, թե վոր ժամանակից պետք է սպասել նոր վարակումներ առաջանալու հրահարավորության, այսինքն՝ վոր ամսից սկսած սպորոզոնիայի համար կլիմայական հարմար պայմաններ կատեղծվեն: Ինչպես հայտնի յե, այդ կարող է տեղի ունենալ, հեղինակներին հոժ մեծամասնության կարծիքով, միայն այն

ժամանակ, յերբ դրսի ողի ջերմությունը 16,0-ից բարձր է\*)...

Տարբեր տարիների համար ըստ ամիսների ստացած միջին ջերմությունը նույնը չի լինում և յենթակա յե բավական նկատելի տատանումների: Ընթացիկ տարվա դարնան կամ ամառվա ամիսների միջին ջերմության ուսումնասիրությունը և նոր վարակումների մասսայական զարգացման համար նպաստավոր կլիմայական պայմանները պարզելը հնարավորություն կտա, այն ձևով կիրառել հակամարտիային միջոցառումները (պոլովիզացիա, բուժ կամ պրոֆիլինինացում և այլն), վոր վտանգը վերանա կամ նվազագույն չափի հասցրվի:

Այդ տեսակետից նշանակութուն ունի նաև ողի հարաբերական խոնավության չափը, քանի վոր նրա ցածր աստիճաններում (42-44 0/0-ից պակաս) մալարիայի պարազիտի սպորոզոնիան անհնարին է համարվում:

Տեղումների քանակը հիմք է տալիս յեզրակացություններ անել այն մասին, թե վորչափ կարելի յե բնական (իսկ վորոշ դեպքերում նաև արհեստական) ճահճացումների զարգացում սպասել և ըստ այնմ պատրաստություն տեսնել նրանց դեմ պայքարելու համար:

\*) Յեթե ընդունենք այն տիրապետող տեսակետը, վոր ձմեռանոցից դուրս յեկած մոծակներն ազատ են լինում սպորոզիտներից և, ուրեմն ընդունակ չեն մալարիա տարածել:

2. ԶՐԱՅԻՆ ՅԱԿՏՈՒԻ ոււումնասիրու-  
թյունը հսկայական նշանակութիւն ունի ա-  
ռաւելապէս այն վայրերում, ուր տեղական  
մալարիայի տարածման համար կան համա-  
պատասխան կլիմայական պայմաններ: Հետա-  
դոտողը նախ և առաջ պիտի սահմանազօ-  
ւայն տարածութիւնը, վորի վրա կատարվելու  
յէ աշխատանքը: Վոչ մի դեպքում այդ տարա-  
ծութիւնը չի կարող սահմանափակել տվյալ  
ընակավայրի, գործարանի կամ խորհտնտե-  
սութիւն, կոլտնտեսութիւն տերիտորիայով,  
այլ անպայման պետք է ընդգրկի նաև նրա շրջ-  
ջակայքը 2-ից մինչև 5 և ավելի կիլոմետր  
տարածութիւնը հաշված նրա ծայրամասերից:  
Թե ինչպիսի շառավիղ պետք է վերցնել ամեն  
մի կոնկրետ դեպքում, այդ պիտի վորոշվի ա-  
ռողջացման յենթակա որչեկտի նշանակու-  
թիւն, վարակվածութիւն ու յեղած ուժերի  
հաշվառման հիման վրա: Վորքան ավելի մեծ  
նշանակութիւն ունի տվյալ վայրը կամ ձեռ-  
նարկութիւնը, վորքան ավելի շատ ու վորակ-  
յալ են աշխատող առողջապահական ուժերը,  
այնքան ավելի մեծ պիտի լինի շառավիղը:

Յեթե աշխատանքների սկզբնական շրջա-  
նում հարկադրված կերպով վերցնում են յեր-  
կու կիլոմետր պարտադիր շառավիղ, ապա  
հետագայում աշխատանքի զարգացման ու

փորձի կուտակման հետ զուգընթացաբար  
այդ շառավիղը հետզհետե պետք է մեծանա:  
Հինգ կիլոմետրը յերբեք չի կարող վերջին  
սահման համարվել, մանավանդ վոր մեզ  
հայտնի յեն դեպքեր, յերբ մոծակներն ակ-  
տիվորեն ընդունակ են յեղել անցնել մինչև 7  
կիլոմետր տարածութիւն: Ուստի և պետք է  
ձգտել այդ շառավիղը հասցնելու մինչև 10  
կիլոմետր:

Նախքան հետազոտման համար ընդու-  
նած տարածութիւն վրա աշխատանքներ ըս-  
կսելը անհրաժեշտ է ձեռք բերել հետազոտվող  
վայրի քարտեզը կամ պլանը, վորը պիտի լի-  
նի վորքան հնարավոր է մեծ մասշտաբով: Հե-  
տադոտութիւն ընթացքում հայտնաբերված  
բոլոր ջրերը — լինեն նրանք հոսող թե կանգ-  
նած, անոֆելյոզեն, թե ստերիլ, մշտական թե  
ժամանակավոր — պետք է նշանակվեն քարտե-  
զի վրա: Նպատակահարմար է ունենալ քար-  
տեզի մի քանի պատճեններ, վորպեսզի կա-  
րելի լինի ամեն տարվա կամ նույնիսկ նույն  
տարվա տարբեր սեզոնների համար տալ  
ջրային Փակտորի վիճակը և այդպիսով հե-  
տեվել նրա դինամիկային: Տարբեր տեսակի  
ու ընույթի ջրերը պետք է նշանակել այնպես,  
վոր քարտեզին նայելիս հնարավոր լինի նկա-  
տել յեղած տարբերութիւնը: Այդ նպատա-  
կով առաջարկված են զմնադան պայմանա-  
կան նշաններ. մենք հարմար ենք համարում  
տղտվել հետևյալ նշաններից.



ԼՈՑ



ԳԵՏ. ՄԱԿՏԱԿԱՆԵՐԸ



ՃԱՂԻՃ



ՄԵՑ ԱՊՈՒՔ



ՄՇՏԱԿԱ ՁՐԱԿԱՆԳ



ՓՈՐՈՒ ԱՊՈՒՔ



ՕՍՈՍՆԱԿԱՎՈՐ ՁՐԱԿԱՆԳ



ԲՐԱՁՈՒ ԴԱՃՏ



ԳՈՐ



ԱՂԲՅՈՒԻՐ



ՓՈՍ

Բացի գրանից շատ հարմար է բոլոր նշումները կատարել յերկու տարբեր գույներով, մեկը՝ ամբողջ ամառվա (տարվա) ընթացքում չանհետացող ջրերի, իսկ մյուսը՝ ժամանակավորապես առաջացող ճահճացումների համար: Քարտեզի վրա պետք է ցույց տալ նաև տվյալ ջրի անոֆելուզեն կամ թրթուրներից ազատ լինելը: Անոֆելուսի թրթուրներ պարունակողների վրա (կամ մոտը) հարկավոր է դնել խաչեր 1-ից մինչև 4, վորոնց քանակը պիտի համապատասխանի մոծակների ջրային սերնդի հոծությունը\*):

\*) Մեկ խաչով նշանակվում են այն ճահճացումները ուր չնչին քանակությամբ թրթուրներ կան, 4 խաչով — ուր մի սաչուկի վրա լինում են՝ 50 և ավելի. 2 և 3 խաչով նշանակվում են միջին տեղ բուսողները:

Հետազոտությունը հեշտացնելու և ամբողջ ջրային ֆակտորն ընդգրկելու համար, այդպիսին պիտի կատարվի վորոշ պլանով: Վորպես յեղակետ պետք է ընդունել հետազոտման յենթակա տերիտորիայի վրա գրանվող գետը, գետակը կամ ամենամեծ առուն: Նրա յերկու ափերը մանրամասն քննելուց հետո, պիտի անցնել յերկրորդականներին: Առանձին, ցրված և հոսող ջրերի հետ կապ չունեցող ջրականոցներ հայտնաբերելու համար, պետք է տեղեկություններ հավաքել տեղի մշտական ու տեղյակ բնակիչներից:

Բացի քարտեզում նշանակելուց, ամեն մի անոֆելուզեն կամ թրթուրների գարգաման համար պիտանի ջրերի մասին հարկավոր է լրացնել հատուկ քարտ, վորը կլինի նրա պասպորտը: Այդ քարտերը պատրաստվում են Առժողկոմատի կողմից, վորտեղից և պիտի ստանալ այն:

Չպետք է մոռանալ, վոր ջրային ֆակտորի վիճակը տարվա բոլոր ամիսներին նույնը չի մնում: Ամենամեծ քանակությամբ ջրեր լինում են գարնանը, յերբ ստորյերկրյա ջրերը շատ բարձր են կանգնած լինում, ուստի և նպատակահարմար է միշտ ունենալ այդ սեզոնում հայտնաբերված ջրերի պատկերը, իսկ հետագայի քննությունների ժամանակ ճիշտ գաղափար կազմել տեղի ունեցող փոփոխությունների մասին:

3. ՄՈԾԱԿԱՍՅԻՆ ՅԱԿՏՈՐԻ Հետազոտու-  
թյունը գուտ մալարիայի տեսակետից վերա-  
բերում է, իհարկե, միայն Anopheles-ներին  
Բայց ցանկալի չէ, վոր միևնույն ժամանակ  
ուշադրություն դարձվի նաև Culicidae  
ների մյուս ցեղերի վրա, մանավանդ վոր  
դրա համար առանձին հետազոտություն-  
ների կարիք չի լինում: Մոծակների ուսում-  
նասիրությունը կատարվում է թե նրանց  
ջրային սերնդի (թրթուրներ, հարսնյակներ)  
և թե արդեն հասունացածների վերաբերմամբ:  
Ջրային սերնդի մասին վորակական (տեսակ-  
ները) և քանակական (խտությունը մեկ քառ.  
մետր ջրի մեջ) տվյալներն ստացվում են ջրա-  
յին Փակտորը հետազոտելու ժամանակ: Սա-  
կայն միանվագ հետազոտության արդյունք-  
ները նույն դրության մեջ չեն մնում. շատ  
հաճախ սկզբում ջուրն ազատ է լինում թրթ-  
թուրներից, իսկ հետո այդտեղ նրանք գոյա-  
նում են հսկայական քանակությամբ, կամ  
պատահում է նաև հակառակը: Այդ յերևույթ-  
ները կապված են առաջին հետին ջրի Փրզե-  
կական, քիմիական և բիոլոգիական հատկու-  
թյունների փոփոխման հետ, վորպիսիները  
ևս յենթակա յեն ուսումնասիրության: Ուստի  
և դեռ ջրային Փախտորի ուսումնասիրու-  
թյան ժամանակ անհրաժեշտ է ընտրել մի  
քանի կետեր, վորոնք պիտի ծառայեն վորպես  
որյեկտներ սխտեմատիկ հետազոտության

համար: Ընտրություն կատարելիս պիտի  
վերցնել տվյալ վայրի համար տիպիկ ջրերը,  
վորոնք գտնվում են նրա տարբեր մասերում:  
Հետազոտում կետերը կարող են վորոչ փո-  
փոխությունների յենթարկվել: Նրանց վերա-  
բերմամբ կատարված սխտեմատիկ դիտո-  
ղությունները հիմք կտան յեզրակացություն-  
ներ անել թե մոծակների զազացման տվյալ  
պայմաններում գոյություն ունեցող հիմնա-  
կան որինաչափությունների և թե ձեռք ա-  
ռած միջոցառումների արդյունքների մասին:

Թրթուրների ու հարսնյակների խտու-  
թյունը մեկ քառ. մետրի վրա վորոշելու հա-  
մար նպատակահարմար է ողտվել այնպիսի  
սաչոկներով, վորոնց մակերեսը հավասար  
է 100 կամ 200 քառ. սանտիմետրի: Առաջինի  
համար շրջադիծը պետք է լինի 35 սանտ.,  
իսկ յերկրորդի համար՝ 50 սմ.: Ջրի տար-  
բեր տեղերից մինչև 10 նմուշ վերցնելուց ու  
նում չի միջին քանակը վորոշելուց հետո պետք  
է վերածել մեկ քառ. մետրի, այսինքն՝ 100  
ք. սանտիմետր սաչոկի դեպքում՝ հարկա-  
վոր է բազմապատկել 100-ով, իսկ 200 քառ.  
սանտիմետրանոցի նկատմամբ՝ 50-ով:

Հասունացած մոծակների վարակումն ու քա-  
նակական ուսումնասիրության համար պետք  
է հետազոտության յենթարկել նրանց «ցե-  
րեկանոցները» ( дневки ), այսինքն՝

այն շենքերը կամ այն կետերը, ուր նրանք թաղնվում են ցերեկը (ձմեռը կարելի չե թե ավորված վիճակում գտնել միայն մի քանի տեսակի անոֆելեսներին, քանի վոր նրանց վորոշ տեսակները ձմեռում են թրթուրային վիճակում): Մ.յդ նպատակով ամենալավն է հետազոտել գոմերը, մութ բնակարանները, նկուղները: Մակայն վորոշ տեսակի մոծակներ (որ. plumbeus) շենքերում համարյա չերբեք չեն յինում կամ քիչ են պատահում, ուստի պետք է աշխատել բռնել նրանց նաև դրսի ողում, յեղեգնուտում, ծառերի փչակների մեջ և այլն:

Մոծակների ուսումնասիրման ժամանակ էլ, բացի տեսակները վորոշելուց, պետք է ուշադրություն դարձնել նրանց քանակի, նրանց դինամիկայի վրա, իսկ այդպիսի տվյալներ կարելի չե ստանալ սխեմատիկորեն կատարվող դիտողությունների միջոցով: Վորպես դիտողությունների կետեր, պետք է բնակավայրի տարբեր մասերում ընտրել մի քանի գոմ կամ այլ շենքեր, ուր սկզբնական հետազոտության ժամանակ մաքսիմալ քանակությամբ մոծակներ են հայտնաբերվել և ապա նրանց յենթարկել պարբերական քննության: Մոծակների քանակը (ինչպես և տեսակը) պարզելու համար ամենանպատակահարմարն է ոգտագործել մոծակի թակարդ-

ներ, սակայն առանց ծուխ դնելու (թակարդը պետք է ամրացնել ցերեկը և վերցնել մութն ընկնելուց հետո): Քանակի փոփոխությունները կրկնակի հետազոտությունների ժամանակ պատկերացում կտան այն մասին, թե արդյոք նույն կետում պակասում, թե՞ ավելանում են մոծակները: Քանակի պարբերական ուսումնասիրությունն այն չափանիշներից մեկն է, վորոնց հիման վրա դատում ենք հակաթրթուռային միջոցառումների եֆֆեկտավորության մասին:

Թրթուրների և մոծակների ամեն մի հետազոտության արդյունքները հարկավոր է արձանագրել, վորպեսզի հնարավոր լինի կատարել նրանց համեմատությունը, անալիզը: Հարմար ենք գտնում այդ նպատակի համար առաջարկել հետևյալ ձևերը: Չրային սերնդի համար՝

19 . . . թ. (Նրակահեզի, աուլի և այլնի անունը կամ №-ը)

№	Հետազոտության ամիսը և թիվը	Գտնված է մեկ քառ, մետրի մեջ				Գիտողություն
		Culicini		Anophelini		
		Թրթուր	Հարսնյակ	Թրթուր	Հարսնյակ	

Ավելի մանրամասն ուսումնասիրութեան դեպքում, հարկավոր է վերջել նաև անոֆելաների թրթուռների տեսակը: Ուստի և այդ դեպքում աղյուսակին պետք է ավելացնել համապատասխան հարցեր:

Մոծակների ցուցակագրման ձևը.

. . . . (գոմի կամ այլ կետի անունը, №-ը)

193 . . . . . թ.

№	Հետազոտութեան ամիսը և թիվը	Ընդանիւր	Պտնված են մոծակներ						Պատրուկ
			Նրանցից			Վերջիններից			
			Culi- cini	Anop- helini	An. macul	An. supcip	An. hyrcan	An. bifurc	
1									
2									
3									

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ԿԵՆՑԱՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
 Խոշոր նշանակութիւն ունեն մալարիայի տարածման ու նրա ընթացքի համար: Այս տեսակետից հետազոտութեան ժամանակ պետք է ուշադրութեան առարկա դարձնել աշխատանքի և բնակարանի տեղը: Վորքան նրանք ավելի մոտ են անոֆելոգէն ճահճացումներին, այնքան ավելի մեծ է վտանգը մոծակների կողմից: Նշանակութիւն ունի աշխատանքի ժամանակը: Յերեկոյան ու գիշերվա հերթափոխութիւններին աշխատողները միջնվնույն վայրում սովորաբար ավելի մեծ վտանգի յեն յենթարկվում, քան մյուսները:

Խոշոր նշանակութիւն ունի բնակարանի կամ աշխատանքի վայրի պաշտպանվածութիւնը մոծակներից (ցանցապատում), ինչպէս և ծածկոցներ (մոծակներից գիշերը պաշտպանվելու համար) գործածելը:

Նկատի պիտի ունենալ նաև բնակարանի (կամ այլ շէնքերի) բարձրութիւնը. ներքին հարկերն ավելի յեն մատչելի մոծակների համար, քան վերին հարկերը:

Պետք է հաշվի առնել ընդհանուր առմամբ և անտեսական գրութիւնը, մասնափորապես սնունդը, ինչպէս նաև աշխատանքով ծանրաբեռնված լինելը (աշխատանք համատեղութեամբ և այլն), քանի վոր անդի անբախտաբար լինելը, գերհոգնածութիւնը, թուլացնելով աշխատավորի դիմադրողական ուժերը, ավելի մատչելի յեն դարձնում նրան մալարիայի պարագիտի զարգացման ու ավելի ծանր ընթացք ունեցող հիվանդութեան համար: Այստեղ հնարավոր չէ թվել այն բոլոր մոմենտները, վորոնք կապված են աշխատանքի կամ կենցաղի պայմանների հետ և վորոնք կարող են այս կամ այն չափով նպաստել մալարիայի տարածմանը: Հետազոտութեան ժամանակ նրանք ավելի հեշտ են ուղի ընկնում: Այդ բոլոր դիտողութիւնները պետք է հաշվի առնել գիտականօրային կամ մալարիային քարտում:

գ. Բնակչության յե՛վ միջավայրի  
նե՛տագոսությունը արդյունքների համեմատությունը

Մարդկանց և նրանց շրջապատող միջավայրի հետազոտումը մի կողմից՝ պարզում է մալարիայի ենդեմիայի (կամ եպիդեմիայի) զարգացման ներկա դրու՛թյունը՝ քանակն ու վորակը, իսկ մյուս կողմից՝ հայտնաբերում է այն հիմնական պատճառները, վորոնք կարող են առաջացնել այդ յերևույթը: Այստեղ արդեն հետազոտողի առջև հարց է ծագում, թե վորքան հնարավոր է մանրամասն ու ստույգ կերպով քննել ու գտնել գոյութուն ունեցող կապը դրսեվորված հնարավոր պատճառների ու հետևանքների միջև: Մալարիայի եպիդեմիոլոգիայի խնդիրները չեն կարող համարվել լիովին պարզված: Դեռ շատ հարցեր կան, վորոնք պահանջում են հետազոտորն ուսումնասիրություն. դիսպանսերացման ժամանակ շատ ցանկալի յե, վոր ուշադրություն դարձվի նաև մութ խնդիրները պարզարանելու վրա: Բայց հիմնական նպատակն է՝ գտնել մալարիայի տարածման պատճառները, ամեն մի կոնկրետ դեպքի կամ դեպքերի ամբողջ մի խմբի վերաբերյալ, վորպեսզի հնարավոր լինի նրանց դեմ անհրաժեշտ միջոցառումներ կիրառել: Բոլորը, նույնիսկ անոֆելյոզեն ջրերը, չեն կարող նույն նշանակությունն ունենալ մալարիայի տարածման համար, բոլոր ջենքերը նույն չափով վտանգ-

ված չեն լինում. տարբեր տեսակի մոծակները (անոֆելիաները) միևնույն դերը չեն խաղում և այլն:

Մյուս կողմից՝ շատ դեպքերում հնարավոր չի լինում միանգամից վերացնել բոլոր հնարավոր կամ վտանգավոր մոմենտները: Անհրաժեշտ է հայտնաբերել այնպիսիները, վորոնք սովյալ կոնկրետ պայմաններում առավելագույն դեր են կատարում և ապա նրանց դեմ ուղղել գլխավոր հարվածները: Իսկ այդ կարելի յե անել միայն այն ժամանակ, յերբ հետազոտողը քննադատորեն է մոտենում ամեն մի մոմենտին, աչխատելով պարզել նրա դերը մալարիայի տարածման մեջ, առանձնացնելով գլխավորը, հիմնականը պատահականից, ինչի յել այդ վերաբերվելիս լինի՝ ճահճացումներին, մոծակների տեսակներին, աչխատանքի ու կենցաղի պայմաններին կամ վորևէ այլ մոմենտի: Թե վորքան հաջող կկատարվի այդ աչխատանքը, այդ ավելի շատ կախված է հետազոտողի ուշադիր, լուրջ ու քննադատական վերաբերմունքից:

դ. Հակամալարիային պայքարի  
ծրագիր կազմելը

Աչխատանքի պլանավորումը հաջողության հիմնական և անհրաժեշտ նախադրյալներից մեկն է: Ծրագիր կազմելու նպատակն է, բազմակողմանի և գիտական բոլոր հիմունք-

ներով մշակել հակամալարիային միջոցա-  
ռումների այն կոմպլեկսը, վորը հնարավոր-  
ություն կտա ամենակարճ ժամանակամիջո-  
ցում, նվազագույն միջոցներ և ուժեր ծախ-  
սելով հասնել մաքսիմալ արդյունքների,  
այսինքն՝ ազդել, փոփոխել կամ վերացնել  
այն գործոնները, վորոնք հիվանդության  
տարածման պատճառ են հանդիսանում:

Ներգործման միջոցները պետք է վերա-  
բերվեն թե մակրոորգանիզմին՝ հիվանդ՝ և  
առողջ մարդուն և թե շրջապատի պայման-  
ներին:

1. ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՓՈՓՈՒՆԵԼՈՒ  
տեսակետից անհրաժեշտ է առաջին հերթին  
նախատեսնել այն հնարավոր միջոցառումնե-  
րը, վորոնք կարող են ավյալ վայրում ու ժա-  
մանակում արմատապես վերացնել մալա-  
րիայի վտանգը: Այստեղ իհարկե, հարցը  
պիտի վերաբերի մալարիայի տեսակետից  
վտանգավոր ճահճացումների ու ճահճների  
վերացնելուն, չորացնելուն: Բայց միանգա-  
մայն սխալ կլինեն բոլոր գեպքերում հարց  
դնել նրանց չորացնելու մասին, անկախ նրա-  
նից, թե ինչպիսի միջոցներ են պահանջվում  
դրա համար, հնարավոր է արդյոք այդ աշ-  
խատանքներն սկսել ու կատարել անմիջա-  
պես: Նախքան այդ հարցը ծրագրի մեջ  
մտցնելը՝ անհրաժեշտ է պարզել յեղած  
հնարավորությունները տեխնիկական ու ֆի-

նանստկան տեսակետից: Ջրային ֆակտորի  
ուսումնասիրության հետ զուգընթացաբար  
մասնագետ տեխնիկական ուժերի մասնակ-  
ցությամբ ու աջակցությամբ պետք է կազ-  
մել նրանց վերացնելու նախագիծն ու նա-  
խահաշիվը: Յեթե հարցը վերաբերում է խո-  
շոր տարածություններ գրավող ճահճներին,  
վորոնք մտնում են Ջրային Տնտեսության  
աշխատանքների ծրագրի մեջ վորպես կա-  
պիտալ շինարարություն, այդ դեպքում ան-  
հրաժեշտ է համապատասխան կարգով (Առ-  
ժողկոմատի, շրջգործկոմի, շրջանային մա-  
լարիային կոմիտեյի միջոցով) բանակցու-  
թյունների մեջ մտնել Ջրտնտեսության հետ,  
նպատակ ունենալով արագացնել անհրաժեշտ  
աշխատանքները: Մնացած ճահճ-ճահճացում-  
ների վերացման հետ կապված ծախքերի նա-  
խահաշիվը կազմելուց հետո, պետք է պար-  
զել բոլոր ֆինանսական հնարավորություն-  
ները, թե շահագրգռված հիմնարկ-ձեռնարկ-  
ների ու կազմակերպությունների և թե ա-  
ռողջապահական մարմինների գծով, և ապա  
հերթական ծրագրի մեջ մտցնել միջոցներով  
ապահովված որյեկտների չորացումը և միև-  
նույն ժամանակ այնպես դարավորել հետագա  
տարիներում կատարվելիք աշխատանք-  
ները, վոր 2-րդ հնգամյակի վերջին ավարտ-  
ված լինեն բոլոր աշխատանքները: Շատ  
պարզ է, վոր մեր մալարիոա շրջանների և

առավելապես առանձին արդյունաբերական ձեռնարկների, խորհրդանենտերի, լինչպես և բնակավայրերի մեծագույն մասի վերաբերմամբ առողջացման հիմնական աշխատանքները պետք է ավարտվեն ավելի շուտ, 1-2 տարվա ընթացքում, քանի վոր նրանք մեծ ծավալ չունեն և համեմատաբար խոշոր միջոցներ չեն պահանջում:

Նույնիսկ այն դեպքում, յերբ հնարավոր է լինում իրագործել ճահիճների չորացումը մի տարվա ընթացքում, կարիք է ըզգացվում նաև վոչ արմատական, պալիատիվ միջոցների, վորոնք կարող են անվտանգ դարձնել անոֆելուզեն ջրերը կամ նրանցից զոյացած մոծակներին, մինչև վոր աշխատանքներն ավարտվեն: Ուստի բոլոր դեպքերում ել պլանի մեջ պետք է խոշոր տեղ գրավեն այն միջոցառումները, վորոնք նպատակ ունեն վոչնչացնել թրթուրներին ու մոծակներին: Քանի վոր թրթուրների դեմ մզվող պայքարն անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի, ուստի և միշտ շեշտը պիտի գրվի դրա վրա. միայն վատ, թույլ աշխատանքի պատճառով, կարիք է լինում լայն պայքար մղել մոծակների դեմ, բացառությամբ այն հազվագյուտ դեպքերի, յերբ ճահիճները խիստ շատ ու լայնատարած են, և յեղած միջոցներով հնարավոր չէ լինում դելարավացիայի յենթարկել նրանց ամբողջովին:

2. ՄԱԿՐՈՈՐԳԱՆԻՉՄԻ վերաբերյալ նախատեսնվող միջոցառումները պիտի ընդգրկեն թե հիվանդներին և թե առողջներին:

Հիվանդների համար նախ և առաջ հարկավոր է բուժում և այդպիսին վերջացնելուց հետո, ընդհանրապես պաշտպանվելու միջոցներ-մեխանիկական պրոֆիլակտիկա և պրոֆիլինիզացիա, յեթե իհարկե նրանց կարիքը զգացվում է: Առողջների համար անհրաժեշտ է միայն նախազգուշական միջոցներ՝ վարկումից ազատ պահելու համար: Պլանի մեջ կոնկրետ կերպով պիտի նշված լինի անհրաժեշտ իրերի (ցանց, մարլյա), դեղանյութերի, ինչպես և այս կամ այն միջոցառման կարիքն ունեցող աշխատավորների թիվը և բացի դրանից նշանակված լինեն աշխատանքների կատարման ժամկետները: Նրա մեջ տեղ պետք է գտնեն նաև սանլուս-կազմակերպչական աշխատանքները (դասախոսություններ, զրույցներ և այն) և հիմնարկի գործունեյության մյուս ձևերը:

Աշխատանքի պլանը լիովին պիտի բղխի հետազոտությունների արդյունքներից և ուժերի ու միջոցների վերաբերյալ մաքսիմալ հրնարավորություններից: Նա պիտի համաձայնեցվի շահագրգռված որդանների հետ, առավելապես այն դեպքում, յերբ նախատեսնված միջոցառումները պահանջում են նրանց նյութական կամ այլ ձևի մասնակցությունն ու թժանդակությունը: Նրա իրագործման հաջո-

դուժյունն ավելի ևս ապահովելու համար անհրաժեշտ է նրա մասսայականացումը սպասարկող աշխատավորութեան մեջ:

Ե. Հակամալարիային միջոցառումների իրագործումը

Այդ աշխատանքների հաջողութեան և մաքսիմալ եֆեկտալորութեան համար շատ մեծ նշանակություն ունի զանազան միջոցառումների ժամանակին կիրառումը: Ժամկետները յերբեք չի կարելի մեխանիկորեն կապել վորևե մասի կամ ամսաթվի հետ. դրանք պետք բղխեն իրական դրութեանից և այս կամ այն յերևույթները հայտնաբերելուց: Ուստի և պայքարը տեղում գլխավորող հիմնակուլութեանն աշարուրջ հսկողութեան պիտի ունենա նրանց վրա: Որինակ՝ մենք չենք կարող վաղորոք ասել, թե վո՞ր ամսից և վոր ուրից պետք է սրկալեն զեւրոպացիոն աշխատանքները, վորովհետև նրանք կապված են թրթուռների հասունացման ու զարգացման վորոշ շրջանի հետ, իսկ այդ կախված է թե մոծակների տեսակների և թե կլիմայական պայմաններից, վորոնք ամեն տարի կարող են նույնը չլինել: Այդ վերաբերում է հավասարապես և դեղինսեկցիային, և պրոֆիլակտիկ քինինացման և այլն: Նույն նկատառումով հնարավոր չի մեխանիկորեն վորոշել նաև ավարտման ժամկետը: Ժամանակից ուշ սկսած կամ վաղ ավարտած գործը կարող է շատ քիչ արդյունք

տալ կամ բոլորովին նշանակուլութեան չունենալ: Այդ վերաբերում է նաև միջոցառումների կրկնութեան ժամկետներին (դելարվացիա և այլն):

Ժամկետների վերաբերյալ կարելի չէ առաջադրել հետևյալ հիմնական պահանջները՝ ճահիճների չորացման աշխատանքները պետք է կատարել այն սահմաններին, յերբ գյուղացիութեանը, կոլտնտեսականները դեռ չեն սկսել կամ արդեն ավարտել են հիմնական գյուղատնտեսական կամ պանիաները, կամ ել վերջիններիս միջև յեղած դադարի ժամանակ, ամեն կերպ պետք է ձգտել, վոր նրանք ավարտվեն մոծակների զարգացման համար նպաստավոր կլիմայական պայմաններն ստեղծվելուց առաջ:

Դելարվացիան անհրաժեշտ է սկսել առաջին անգամ 3—4-րդ հասակի թռթուռներ հայտնաբերելիս և պարբերաբար շարունակել, մինչև վոր նրանք իսպառ անհետանան:

Չմեռանոցներում մոծակների վորջնացման առաջին պայքարը (ծխումներ և այլն) պետք է սկսել այն ժամանակ, յերբ ցրտերն ընկնում են, յերբ մոծակներն անցնում են ձմեռանոցները, իսկ յերկրորդ՝ վարնան սկզբին, նախքան մոծակների դուրս գալը գոմերից:

Մեխանիկական պրոֆիլակտիկան (պոլագիղացիա և այլն), ինչպես և պրոֆիլակտիկ քինինացումն անհրաժեշտ է սկսել նախքան մոծակները առաջին գեներացիայի դուրս գալը

ճահիճներին: Ծածկոցներն զործածությունը պիտի դադարեցնել աշնանը, յերբ մոծակները մտնում են ձմեռանոցները, իսկ պրոֆիլակտիկ քինինացումը դրանից հետո շարունակել դարձյալ մեկ ամիս:

Մանրուս և բուժման աշխատանքները կարելի չեն և պետք է շարունակել միշտ, բայց առանձնապես յեռանդուն կերպով այդ աշխատանքները կատարելու ամենանպաստալոր ժամանակն է աշնան կեսերից մինչև դարնան կեսերը առող ժամանակաշրջանը, այսինքն՝ այն ամիսները, յերբ մասնավորապես կոլտնտեսականները շինարարական ու մի շարք այլ բանվորներ դեռ չեն ցրվել դուրս, դաշտերը, այլ կենտրոնացած են գյուղերում ու աշխատանքի ցանազան կետերում:

Դիսպանսերացման աշխատանքների ժամանակ պետք է իսպառ վերացված լինի դիմազրկությունը: Տրոպիկայնի, դիսպանսերի կամ այլ բժշկա-սանիտարական հիմնարկի ամեն մի աշխատակից պիտի ունենա կոնկրետ աշխատանքներ, վորոնց համար նա լիովին պատասխանատու լինի: Այդ առավելապես վերաբերվում է բոնիֆիկատոր-խինիզատորներին: Նրանցից մեկը պետք է կցված լինի վորոշ տերիտորիայի, բնակավայրի, հիմնարկ-ձեռնարկի և պարզ պատկերացնի իր անելիքները, իր պարտականությունների և իրավունքների սահմանները: Բոնիֆիկատորները, խինիզատորները տեխնիկական աշխատողներ են և

հետևաբար, նրանք պետք է աշխատեն բժշկիցուցմունքների համաձայն: Յեթե մենք ամեն կերպ աշխատում ենք բարձրացնել նրանց կվալիֆիկացիան, յեթե մենք ցանկանում ենք, վոր նրանք տիրապետեն հակամալարիային պայքարի տեխնիկային ապա նույնիսկ ամենավորակյալ բոնիֆիկատորին մենք չպիտի հանձնարարենք այն ֆունկցիաները, վորոնց կատարողը միայն վորակյալ, մասնագիտացած բժիշկը կարող է լինել:

Տեխնիկական պերսոնալն անընդհատ ղեկավարություն պիտի ստանա մասնագետի կողմից: Բայց վերջինս յերբեք չպետք է սահմանափակի իր դերն ընդհանուր ղեկավարություն ու ցուցմունքներ տալով: Դրանք կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, յեթե բղիտում են աշխատանքի կոնկրետ պայմաններից: Դրան զուգընթաց պետք է կիրառվի ցուցմունքների և առաջադրած խնդիրների կատարման սխտեմատիկ ստուգում: Ինչքան էլ բարեխիղճ ու վորակյալ լինի տեխնիկական աշխատողը, այնուամենայնիվ նրա աշխատանքի մեջ կարող են լինել թերություններ, վորոնք կհայտնաբերվեն և կուղղվեն միայն ստուգման ընթացքում:

Ստուգումը տեղի պիտի ունենա հակամալարիային հիմնարկների ավելի բարձր ողակների կողմից՝ նրան յենթակա ողակների վերաբերյալ, որինակ՝ շրջանային տրոպիկայնի կողմից տրոպիկայանսերի վերաբերմամբ, վեր-

Ղինների կողմից՝ պրոֆկայանների վերաբերմամբ և այլն:

Հաջողության խոչոր յերաշխիք է հանդիսանում աշխատանքի նոր, սոցիալիստական մեթոդների լայն էիրառումը. յեթե մի քանի տարի առաջ վոմանք ճգնում էին ապացուցել, վոր սոցմրցումը և հարվածայնությունը չե՛ն կարող հաջողություն ունենալ առողջապահության ֆրոնտում, ապա այսօր կոնկրետ իրականությունը միանգամայն ջախջախել է այդ տեսակետը: Սոցմրցումը և հարվածայնությունը պետք է ամենալայն կերպով կիրառվեն հակամարտիային աշխատանքների ասպարիզում, նրանցից դուրս չպիտի մնա մարտիայի դեմ պայքարող և վոչ մի աշխատակից: Սոցմրցման պայմանագիր պիտի կնքեն իրար հետ թե նույն շրջանի և թե տարբեր շրջանների արտահիմնարկները, ինչպես և մարտիայի խնդրով դբաղվող մյուս կազմակերպությունները:

Անցնելով տարբեր բնույթ կրող աշխատանքներին՝ անհրաժեշտ է դրանցից ամեն մեկի մասին տալ հետևյալ կոնկրետ ցուցմունքները՝

I) ՆՈՐ ՍՐ ՀԵՍՏԱԿԱՆ ՃԱՀՃԱՑՈՒՄՆԵՐԻ ԿՄՆՆԱՐԳԵԼՈՒՄԸ.— Այստեղ առանձին ուշադրության առարկա պիտի լինի վոռագման ցանցը՝ սկսած նրա նախագծելու մոմենտից մինչև նրա շահագործումը: Վոռագման, ինչպես և չորացնող ցանցի

նախագիծը կազմելու ժամանակ, արդեն կարելի չէ մտածել մի շարք այնպիսի փոփոխություններ, վորոնք որինակ՝ կապահովեն հոռող ջրերի անհրաժեշտ արագությունը (մի վարկյանում 20 սանտիմետրից ավելի), վորը հետագայում կխանդարի թրթուռների զարգացմանը: Ցանցի շինարարության ժամանակ մասնագետ բժշկի հսկողությունը, կարող է կանխել մի շարք սխալներ, վորոնք պատճառ են դառնում նոր ճահճացումներ առաջանալուն: Այս տեսակետից խոչոր նշանակություն ունի բեզերվների խորությունը և նրանց հեռավորությունն առուներից, ինչպես նաև ընդհանուր թեբությունը: Բեզերվներն այնպես պիտի լինեն շինված, վոր նրանք չհասնեն ստորյերկրյա ջրերի մակերեսին՝ նրանց ամենարարձր դիրք ունեցած ամիսներին, վոր նրանց մեջ առվից ֆիլտրացիայի միջոցով ջուր չծծվի, և վոր նրանք ունենան ընդհանուր թեբություն և յելք դեպի այնպիսի ավազաններ, ուր կարող են թափվել նրանց մեջ հավաքված անձրեվային կամ այլ ջրերը:

Վոռագման ցանցի պրոֆիլակտիկան լրիվ չափով կիրառելու համար, պետք է ղեկավարվել Առժողկոմատի և Զբոստեսության կողմից կազմված հատուկ սանմինիմումի ցուցմունքներով, ինչպես նաև Զբոստեսության համապատասխան պարտադիր վորոշումներով:

Հսկողություն պիտի ունենալ վոռագման ցանցի մաքրման ու վերանորոգման ժամանակ:

Ջրոնտեսութեան վերջին հրահանգներից մեկում (1934 թ.) նախատեսնվում է տրուպիկա-նարկների բժշկիկների մասնակցութեանը վերանորոգման աշխատանքներն ընդունող հանձնաժողովներին: Այդ իրավունքը պետք է լիովին ոգտագործել և չընդունել այն առուները, վորոնց վերանորոգումը կատարված է թերի, մակերեսորեն:

Բացի ջրային ցանցից, հարկավոր է աչալուրջ հսկել նաև բոլոր այն շինարարական կամ արտագրութեան հետ կապված աշխատանքներին, վորոնց ընթացքում գործ են ունենում ջրի հետ և հետևապես հնարավոր է մոծակի Կարգացմանը նպաստող ջրհանգների առաջացում: Մասնավորապես ուշագրութեան պիտի դարձնել հրդեհաչեջ նպատակներով պատրաստվող ավազանների և տակառների վրա, ճեռնարկելով տվյալ պայմաններին համապատասխանող կոնկրետ միջոցառումներ՝ մոծակների թրթուռների զարգացումը նրանց մեջ անանհարին դարձնելու համար (ավազանի խորութեանը յերկու մետրից ավելի, ջրի պարբերական նորոգումը, մոծակների մուտքի արգելումը կախարիչով և այլն):

2) Ճանիհների չորացումը. — Ճահիհները չորացնելու ձևերը բավական բազմազան են: Ընտրութեան կատարելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով. պետք է գերադասել այն ձևը, վորը, լինելով ավելի եժան, միևնույն ժամանակ ավելի նպատա-

կահարմար է հանդիսանում չորացրած տարածութեանների գյուղատնտեսական կամ այլ կարիքների համար ոգտագործելու տեսակետից:

Շատ մանր ճահիհները վերացնելու համար ամենանպատակահարմարն է գործադրել արհեստական կոյլմատածը, այսինքն՝ դետնի համապատասխան մասերը (վորտեղ ջուր է հավաքվում) լցնելը, հողով ծածկելը, նրանց մակերեսը բարձրացնելը: Դրա համար, շատ հաճախ ոգտագործվում է շինանյութերից մնացորդ աղբը, հողը և այլն: Յեթե ոգտագործվում է որգնական նյութերի մնացորդներով հարուստ աղբ՝ ընակավայրերին մոտ գտնվող ճահիհները չորացնելու համար, անհրաժեշտ է կանխարգելել այդ նյութերն անխուսափելիորեն փթելու հետևանքով առաջանալիք գարշահոտութեան տարածումը: Այդ նպատակով, աղբը թափելուց հետո, պետք է այն վերեից ծածկել առնվազը մի քառորդ մետր հաստութեան ունեցող մաքուր հողի շերտով:

Անհրաժեշտ է նաև հիշել, վոր ճահիհները լցնելիս, հողով ծածկելիս, չպետք է նրանց մակերեսը հասցնել միայն չրջապատի բարձրութեան, այլ պետք է նրան բարձրացրնել մոտ կես մետր ևս, վորպեսզի լցրած հողը նստելուց հետո, նորից փոս չառաջանա, ճահիհում չգոյանա: Բնական կոյլմատածը ձեռնառու չէ, մանավանդ այն դեպքում, յերբ

ճահճացած տեղի մաս կա հողի ավելորդ պա-  
շար, թմբեր, ավերակներ և այլն:

Հորիզոնական դրենաժի տեսակներից ա-  
մենանպատակազարմարն է (մոծակների գար-  
զացումն արդելելու տեսակետից) փակ դրե-  
նաժը, ուստի հնարավորության դեպքում,  
պետք է այն դերադասել բաց սիստեմին, յերբ  
չորացվող առուները քանդվում են և կարող են  
բուն դառնալ մոծակների գարզացման համար:

Հիդրո- տեխնիկական աշխատանքները  
նախագծելու և կատարելու ժամանակ, անհը-  
րաժեշտ է, կապ պահպանել մասնագետ տեխ-  
նիկների, և առաջին հերթին ջրային տնտե-  
սության տեղական օրգանների հետ:

Տվյալ տրոպիկամարկի սպասարկման շըր-  
ջանում կատարվելիք հիդրոտեխնիկական աշ-  
խատանքների համար հատկացված գումարնե-  
րը, անկախ նրանից, թե ո՛ւմ նախահաշվով են  
նրանք ընդունված (տեղական բյուջե, արդյու-  
նաբերական ձեռնարկ և այլն), պետք է կեն-  
տրոնացվեն տրոպիկամարկում: Միայն առան-  
ձին դեպքերում, յերբ տվյալ հիմնարկը կամ  
ձեռնարկը ձեռնահաս է իր ուժերով կատարել  
իր վրա վերցրած հիդրոտեխնիկ աշխատան-  
քները, կարելի չէ նրա վրա թողնել վերջիննե-  
րիս իրագործումը, բայց սիստեմատիկ հսկո-  
ղություն սահմանելով կատարման ու նրանց  
վորակի վրա:

3) Դելտավազիա. — Դելտավազիայի (մո-  
ծակների թրթուռների վոչնչացման) նպատա-

Վով, առաջին հերթին պիտի ոգտագործել փա-  
րիզյան կանաչի խառնուրդ (մեկ մաս փարիզ-  
յան կանաչ — 100 մ. ճանապարհի մաղած փո-  
շի): Յեթե ճահճացումներում գտնված են  
միայն անոֆելիսի թրթուռներ, ապա այլ լար-  
վիցիդի դիմելու կարիք չկա:

Ճահճների նավթացում (պետրոլիզացիա)  
պետք է կիրառել միայն այն դեպքում, յեթե  
նրանց մեջ առաջացել են նաև հասարակ մո-  
ծակների թրթուռներ\*) . վորոնց վրա փարիզ-  
յան կանաչի խառնուրդ ցանկը (վերդիֆիկա-  
ցիան) չի ազդում: Մակայն այդպես պիտի վար-  
վել միայն այնպիսի ճահճների վերաբեր-  
մամբ, վորոնք գտնվում են բնակավայրի սահ-  
մաններում կամ նրանց սահմանների շտ  
մտո:

Բացի դրանից պետրոլիզացիայի պիտի յեն-  
թարկել նաև այնպիսի նույնիսկ անոֆելիո-  
զեն ճահճացումներ, վորոնց մեջ արդեն զար-  
գացել են մոծակների հարսնյակները, վորոնց  
վրա փարիզյան կանաչը չի ազդում

Այդ նպատակով գործադրվող այլ մի-  
ջոցներից անհրաժեշտ է ոգտագործել նաև  
զամբուզիա (*Gambusia affinis*) կոչ-  
ված ձկնիկներին: Նրանց լայնորեն տարածելու  
համար մեր պայմաններում մի խոշոր արդելք  
կա, այն է, վոր ձմռան ցրտերին, յերբ ջուրը  
սառչում է, նրանք չեն դիմանում: Ուստի և

\*) Հասարակ մոծակները թեև մալբրիա տարա-  
ծել չեն կարող, բայց և այնպես, զարգանալով մեծ  
չափերով, խանգարում են մարդու հանդիսը.

անհրաժեշտ է ամեն մի շրջանի համար ունենալ հատուկ բուժարան—ավազան, վորտեղ ջուրը չի սառչում, և ամեն անգամ դարնանը ձկնիկներից նոր պարտիաներ տեղափոխել ճահիճների մեջ: Բացի դրանից գամբուզիաները չպիտի տեղափոխվեն այնպիսի ջրեր, ուր ապրում են այլ ձկներ, վորովհետև վերջինները վտնչացնում են գամբուզիաներին:

Կանգ չառնելով մի շարք այլ լարվեցիզ միջոցառումների վրա, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, վոր դելարվացիան պայտատիվ միջոցների շարքում գրավում է առաջնակարգ տեղ, ուստի առանձին ուշադրությամբ պետք է վերաբերվել այդ միջոցառումը ճշտությամբ և ժամանակին կիրառելուն: Յեթե իրոք աշխատանքները կանոնավոր կերպով են կատարվում, ապա ջրերի հետադժաման ժամանակ չպետք է գտնվի նրանց միջև վոչ մի հարսնյակ (անոֆելես մոծակի):

4) Գեզինսեկցիա.— Արդեն թևավորված մոծակների վտնչացմանը ձեռնարկում են այն ժամանակ, յերբ նրանց թիվը բավական աճել է, այսինքն՝ յերբ վատ են կիրառվել դելարվացիոն միջոցառումները: Գեզինսեկցիան կիրառվում է թե ամառը և թե ձմեռը: Ամռան այն վայրերում, որ խիստ բազմացել են մոծակները, ձմեռն այն տեղերում, ուր առհասարակ կան մոծակներ: Յեթե ամառվա ընթացքում կիրառվող դեզինսեկցիան նպատակ ունի

ավյալ ժամանակամիջոցում նվազեցնել մալարիան տրածողների քանակն անմիջականորեն, ապա ձմեռային դեզինսեկցիան հետապնդում է ավելի հեռավոր, բայց միևնույն ժամանակ և ավելի խորը պրոֆիլակտիկ նշանակութուն ունեցող նպատակ՝ վորքան կարելի յե պահասացնել ա՛յն մոծակների թիվը, վորոնք թեև ձմեռն անվտանգ են լինում, բայց պոտենցիալ ընդունակութուն ունեն գարնան հենց սկզբին ծնունդ տալ միլիոնավոր և միլյարավոր նոր սերնդի, վորը պետք է մալարիա տարածի:

Ձմեռային դեզինսեկցիան սկսվում է այն ժամանակ յերբ մոծակներն անցել են ձմեռանոցները և քուն են մտել\*): Գեզինսեկցիան կատարվում է սովորաբար յերկու նվազ՝ ցրտերն սկսվելուց անմիջապես հետո (նոյեմբեր—դեկտեմբեր) և ձմռան վերջին ու գարնան սկզբին (փետրվար—մարտ):

Գեզինսեկցիայի համար նախապես շատ միջոցներ են առաջարկված: Գործնական կիրառման համար այսոր ամենանպատակահարմարն է հատուկ թակարդի գործադրումը և ծծումբի կամ ծխախոտի փոշու (4—5 գրամ մեկ խոր. մետր տարածության համար) ռզտադործումը:

\*) Վորոշ պայմաններում ձմեռանոցները մտած մոծակները չեն քնում և ակտիվ կենսագործունեութուն են ցուցաբերում (արյուն ծծելու) նաև ձմեռվա ընթացքում.

Իեղինսեկցիոն աշխատանքները կարող են լավ արդյունքներ տալ այն դեպքում, յերբ նրանք մասսայական բնույթ են կրում, իսկ դրա համար անհրաժեշտ է մասնակից դարձնել այդ աշխատանքներին աշխատավորության լայն մասսաներին, տեղի սանիտարական ակտիվին, մանվանդ պիոներներին և առհասարակ զպրոցականներին, վորոնք միշտ խոշոր ոգնություն են ցույց տվել նման աշխատանքների ժամանակ:

5) Մեխանիկական պրոֆիլակտիկա.—Այն դեպքերում, յերբ թրթուռներին ու մոծակներին վոչնչացնելով միայն հնորավոր չե վերացնել վերջիններիս շիումը մարդու հետ, կարիք է լինում դիմել մարդուն մոծակներից պաշտպանելու միջոցներին:

Յեթե հանրապետության ներքին շրջանների համար այդ միջոցն ունի միայն ժամանակավոր նշանակություն և՛ ճահիճների իսպառ վերացման հետ միասին կվերանա նաև նրա կարիքը, ապա այդ ավելի տեսական բնույթ ունի այն սահմանամերձ շրջանների համար, ուր հարևան վոչ խորհրդային պետությունների տերիտորիայի վրա կուտակված են ճահիճների մեծ տարածություններ (Ղուրղուղուլու, Վաղպատի, Ղամարլի, Վեզու, Մեզրու շրջանների սահմանամերձ դյուղերը):

Մոծակներից պաշտպանվելու միջոցներից ամենատարածվածը և ամենից ավելի նշա-

նակություն ունեցողն այժմ պոլոզիզացիան (ծածկոցների գործածությունը) պիտի համարել և ապա պատուհանների ու դռների ցանցապատումը:

Պոլոզիզացիա կիրառելիս անհրաժեշտ է տանձին ուշադրությամբ հետևել նրանց կանոնավոր կիրառման և պահպանման գործին, այլապես նրանցից չի կարելի ստանալ այն արդյունքը, վորը նրանք կարող են տալ:

Ծածկոցները պետք է ունենան ստանդարտ ձև՝ 2 մետրից մինչև 2 մ. 20 սմ. յերկարություն, մեկ և կես մետր բարձրություն և մեկ մ. 10 սմ. լայնություն: Յեթե անհրաժեշտ է, տեղական պայմաններից յելնելով, ունենալ ընտանեկան ծածկոցներ, ապա նրանց լայնությունը պիտի լինի 2 մետր:

Արդյունաբերական ձեռնարկությունների, խորհանսեսությունների, ինչպես նաև հիմնարկների բանվորների ու ծառայողների համար ծածկոցներ պետք է ձեռք բերվեն վարչաթյունների հաշվին և տրվեն ոգտագործելու միայն այն ժամանակամիջոցում, յերբ մոծակները գտնվում են ձմեռանոցներից դուրս, այսինքն՝ ապրիլից մինչև հոկտեմբերնոյեմբերը (դաշտավայրի համար): Սեզոնն անցնելուց հետո ծածկոցները պիտի հավաքել և խնամքով պահել մինչև մյուս սեզոնը:

Կորոնտեսականներին ծածկոցներ պիտի տրվեն իրենց հաշվին: Վորովհետև հնարավոր

չե միանգամից, մի տարւլա ընթացքում, բո-  
լոր կարիք ունեցողներին ծածկոցներ մատա-  
կարարել, ուստի և առաջին հերթին այդպիսի-  
ները պիտի տրվեն լավագույն կ'ըլտնտեսական-  
հարվածայիններին: Միաժամանակ շարունակ  
պետք է հսկել, վոր ծածկոցներն իրենց նպա-  
տակին ծառայեն և չողտագործվեն այլ կա-  
րիքների համար:

6) Պրոֆիլակտիկ ֆինինացում (խինիգա-  
ցիա). մինչև վերջին տարիները մեզ մոտ  
պրոֆիլակտիկ քինինացումը հակամալարի-  
ային միջոցառումների մեջ գրավում է բա-  
վական խոշոր տեղ: Սակայն մալարիայի դեմ  
մղվող պայքարի ռազիկալ միջոցների ավելի  
լայն զարգացման հետ միասին, քինինացումը  
հետզհետե սկսեց զիջել իր դիրքերը:

Պրոֆիլակտիկ քինինացումը զուտ պա-  
շիատիվ միջոց է, վորի կիրառումն ան-  
հրաժեշտութուն է հանդիսանում միայն վո-  
րոջ պայմաններում, յերբ այլ միջոցառում-  
ներ շատ դժվար կամ անհնարին է կիրառել:  
Ուստի նախքան նրան դիմելը, ամեն անգամ  
անհրաժեշտ է պարզել, թե հնարավոր չե  
արդյոք նրա փոխարեն գործադրել մի այլ  
միջոց, վորը թե իր արդյունքներով և թե  
անտեսական տեսակետից ավելի նպատա-  
կահարմար լինի, որինակ՝ ճահճացումների  
չորացում, դելարվացիա, դեզինսեկցիա, մե-  
խանիկական պրոֆիլակտիկա:

Մալարիայի դեմ կռվող մի շարք հիմ-  
նարկների սխալը հենց այն է, վոր նրանք հա-  
ճախ մուսնալով թված միջոցառումների ա-  
վելի խոշոր նշանակութունը, տարվում են  
պրոֆքինինացումով, անտես անելով այն հան-  
դամանքը, վոր պրոֆքինինացումը լոկ ժա-  
մանակավոր նշանակութուն ունի, վոր այն  
ամեկանոն կերպով կատարելու դեպքում՝ նա  
վոչ թե ոգուտ, այլ վնաս է հասցնում մար-  
դուն, պրոֆիկացիայի յենթարկելով նրա լա-  
տենտ մալարիան: Վերջապես, պրոֆքինի-  
նացումը խիստ թանգ նատող միջոց է, քանի  
վոր ծախսվող քինինն արտասահմանից ներ-  
մուծվող նյութ է:

Յեթե քննադատորեն մոտենալու լինենք  
պրոֆքինինացում կիրառելու յուրաքանչյուր  
դեպքին, կտեսնենք, վոր դրանցից <sup>3</sup>/<sub>4</sub>-ը մի-  
անգամայն հնարավոր է փոխարինել ավելի  
եժան և միևնույն ժամանակ ավելի արդյունա-  
վետ միջոցներով:

Ուստի, նախքան պրոֆիլակտիկ քինինաց-  
ման դիմելը, պետք է բազմակողմանի կեր-  
պով քննել կոնկրետ դեպքը և կանգ առնել  
նրա վրա միայն այն ժամանակ, յերբ դա ան-  
հրաժեշտութուն է ներկայացնում:

Այս դեպքում յերբեմն բժիշկները վոչ  
թե իրենք են վորոշում խնդիրը, յելենելով  
դիտության տվյալներից, այլ յենթարկվում  
են տեղական օրգանների կամ մասսայի պա-

հանջին, վորոնք ծանօթ լինելով միայն պրոֆ-  
քինինացմանը, մալարիայի սեզոնն սկսվելուն  
պես անընդհատ դժուարներ են անում քինինա-  
ցում կիրառելու մասին:

Դա հետևանք է մի կողմից հակամալարի-  
ային պայքարը վարող հիմնարկների միա-  
կողմանի աշխատանքի, իսկ մյուս կողմից՝  
սանլուսաշխատանքների թուլության, վորի  
պատճառով սխալ կարծիք է արմատացել  
լայն հասարակության մեջ պրոֆքինինացման  
նշանակության մասին:

Յե՞րբ պետք է դիմել պրոֆքինինացման:  
Միայն յերկու դեպքում. առաջինը, յերբ ան-  
հնարին է այլ միջոցներով գործնական պայ-  
քար մղել մալարիայի դեմ: Այդ կարող է պա-  
տահել միայն այն դեպքում, յերբ հարկավոր է  
պաշտպանվել մալարիայից մի այնպիսի վայ-  
րում, վորի շրջակայքում կան ճահճների  
խոշոր տարածություններ, վորոնց չորաց-  
նելը կամ վրտեղ լիակատար դելարվացիա  
կիրառելը ներկա մոմենտում անհնարին է:  
Նման դեպքերում մեխանիկական պրոֆիլակ-  
տիկայի լայն կիրառման հետ միասին ան-  
հրաժեշտ է կիրառել նաև պրոֆքինինացում:

Յերկրորդ դեպքն այն է, յերբ մալարի-  
այի դեմ պայքարող հիմնարկության վատ  
աշխատանքի հետևանքով պայքարն արդյունք  
չի տվել, մոծակները խիստ բազմացել են և  
վտանգ առաջացրել մասսայական վարակման  
համար:

Յելնելով ՀՍԽՀ-ի կոնկրետ պայմանե-  
րից՝ պետք է ասել, վոր մենք շատ քիչ վայրեր  
ունենք, վորոնք համապատասխանում են ա-  
ռաջին դեպքին: Ուստի լավ աշխատելու դեպ-  
քում պրոֆքինինացման կիրառումը կարելի  
է հասցնել մինիմումի, գործադրելով յեղած  
խինինն ավելի արդյունավետ կերպով՝ բու-  
ժական քինինացման համար:

Քինինացման համար մինչև այժմ առա-  
ջադրված մեթոդներից մեր պայմաններում  
ավելի դրական հետևանք է տվել Պլենի ձևը  
(առաջին որը 0,5 կամ 1,0 խինին, 2-րդ որը՝  
0,5, 3, 4, 5-րդ որերը՝ դադար): Սակայն այդ  
մեթոդը հարմար է այնտեղ, ուր գոյություն  
ունի հնգորյա բանվորական շարաթ: Վեց-  
որյա շարաթվա համար նրա կիրառումը մեծ  
խոչընդոտների յե հանդիպում (հանգստի որը  
հնարավոր չէ գտնել քինինացման յենթարկ-  
վողներին և այլն): Ուստի վեցորյակով աշ-  
խատող հիմնարկ-ձեռնարկումների, խորհ-  
ունտեսությունների և կոլտատեսությունների  
համար անհրաժեշտ է մշակել նոր ձևեր: Նպա-  
տահահարմար ենք համարում այդպիսիների  
նկատմամբ առաջարկել հետևյալ ձևերը՝

1. 1-ին, 2-րդ և 5-րդ որերը—0,5—0,6  
գրամ, 2-րդ, 4-րդ և 5-րդ որերը—դադար:
2. 1-ին, 2-րդ և 4-րդ որերը—0,5, իսկ  
մյուս որերը դադար:

3. 3-րդ ուրը 1,0\*), 5-րդ ուրը 0,5, մյուս ուրերը դադար:

4. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ուրերը՝ 0,3-0,4, վեցերորդ ուրը—հանգիստ:

Առաջարկվող ձևերից առաջինը և չորրորդը հարմար են այն ուրյեկտների համար, ուր բանվոր-ծառայողների կամ կոլտնտեսականների թիվը 200-250-ից չի անցնում, այսինքն՝ ուր մեկ խինիզատորը կարող է մեկ որվա ընթացքում գտնել քինինացման յենթարկվող բոլոր անձաց և խինին տալ:

Ավելի մազմամարդ ուրյեկտների համար հարմար է կիրառել 2-րդ և 3-րդ ձևերը միասին, քանի վոր այդ դեպքում միևնույն խինիզատորը կարող է միաժամանակ ընդգրկել յերկու խումբ (2-րդ ձևի դադարի ուրերը դուրսագրվում են 3-րդ ձևի քինինացման ուրերին):

Պրոֆքինինացում կիրառելիս, անհրաժեշտ է կատարել հետևյալ պահանջները՝

1. Խինինը պետք է տրվի աշխատանքի վայրում, առանց աշխատանքից կտրելու (դադարյա հի մոտ, դաշտում, հիմնարկության մեջ) կամ ել տանը, հանրակացարանում, յեթե հնա-

\*) Յերը խինինը տրվում է մեծ դողայով, նա կարող է մի քանի ժամից վոմանց մեջ առաջացնել թուլութուն, ականջների խշոց: Վորպեսզի այդ յեբույթները չանդրադառնան աշխատանքի արտադրողականության վրա, հարկավոր է խինինը տալ աշխատանքը վերջանալու պահին:

րավոր է ամեն անգամ աշխատավորին տանը գտնել:

2. Խինինը պիտի բաժանվի հատուկ խինիզատորների միջոցով, վորոնք պահվում են կամ բուժարոֆհիմնարկի կամ ել ինչպես ավելի հաճախ լինում է, հիմնարկ-ձեռնարկների ու կուկոլտնտեսությունների միջոցներով: Վերջին դեպքում ել նրանք իրենց աշխատանքի համար պատասխանատու յեն քինինացում կիրառող բուժարոֆհիմնարկի առաջ:

Վոչ մի դեպքում չի՛ կարելի խինինը բաժանել պատահական մարդկանց կամ բրիգադավարների միջոցով:

3. Տված խինինն անմիջապես պետք է ընդունել խինիզատորի ներկայությամբ և յերբեք չպետք է թույլ տալ, վոր խինինն ընդունվի հետո, վորովհետև անցյալի վորձը ցուցց է տվել, վոր այդպիսի դեպքերում խինինը սովորաբար չի ոգտադործվում հիվանդի կողմից: Դրա համար խինիզատորը պետք է իր մոտ ջուր ունենա:

4. Քինինացումը պետք է կիրառվի միանգամայն կանոնավոր կերպով. ամեն մի շեղում ընդունված մեթոդից իջեցնում կամ բոլորովին անարժեք է դարձնում քինինացման նշանակությունը: Չպետք է մոռանալ նաև, վոր անկանոն քինինացումը կարող է պրոֆակացիոն միջոց հանդիսանալ խրոնիկական մալարիան թարմացնելու տեսակետից կամ ել առաջ բերել պարազիտի խինինորեզիստենտ ձևեր:

5. Անհրաժեշտ է, վոր մշտական բժշկական հսկողություն լինի քինինացման ընթացքի վերաբերմամբ, հաճախ տեղում ստուգելու միջոցով և այլն:

6. Պրոֆքինինացումը պետք է սկսել նախքան մոծակների առաջին դեննրացայի դուրս գալը (ճահիճներից) և շարունակել մինչև նրանց՝ ձմեռանոցներն անդնելը և հետո դարձյալ մեկ ամիս կատարել այդ աշխատանքը: Յեթե քինինացումն այս կամ այն պատճառով ուչ է սկսվել, ապա այս դեպքում ել քինինացումը պիտի շարունակվի մինչև հիշած ժամկետը:

Քինինացման համար պետք է խինին գործածել տարբեկաներով: Տարբեկաները նախորդ պետք է ստուգվեն լուծվելու ընդունակության տեսակետից: Հնացած ու ամրացած, քիչ թրթիվեցրած ջրում շուտ չլուծվող տարբեկաները գործածության համար անպետք են. նրանց կարելի չէ գործադրել միայն փոշի դարձնելուց հետո:

Ամեն մի որյեկտի բանվոր-ծառայողների համար նախքան քինինացում սկսելը պետք է կազմել հատուկ ցուցակ, նշելով նրա մեջ նաև վորոչ տեղեկություններ յուրաքանչյուրի առողջության մասին:

Նպատակահարմար ենք համարում այդ ցուցակի համար առաջարկել հետևյալ ձևը՝

№	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Տարիք	Ցնրք և ունց մարմնի անոթ	Որտեղ և մեկ արթիք	Փայծաղի վրձակը	Քինինացման որերը								Քիտողութ.		
						15/6	16	20	21	25	26	30/6	17		5	
1	Մանուկյան Սիմոն	28	31թ.	այո	Զի շրջափ.	+	+	+	+	+	+	+	+	+	+	
2						+										+
3																
4																
5																

Կարիք չկա ցուցակում նշանակել բոլոր որերը, նշվում են միայն այն որերը, յերը խինին է տրվում: Ամեն անգամ խինին տալիս խինիզատորը, պետք է ցուցակում նշանակի այդ, այսինքն խաչ դնի, յեթե նույն որը յերկու անգամ է խինին տրվում, ապա յերկու անգամ է նշանակվում (ինչպես ցուցակում, յերը Պլենի ուժեղացրած ձևն է կիրառվում): Քինինացման յենթարկվող բացակայության դեպքում՝ խաչի փոխարեն 0 յե դրվում, իսկ յերը նա հրաժարվում է ընդունելուց, դրվում է՝ — (դիծ):

Հրաժարվողների վերաբերմամբ պետք է ձեռք առնել բարոյական ներազդման միջոցներ, ոչ տազործելով այդ ուղղությամբ տեղի կուս. և պրոֆ. կազմակերպությունների միջամտությունը:

Յեթե տվյալ որյեկտի աշխատավորները թիվը փոփոխական է, անհրաժեշտ է կապ պահպանել վարչության հետ և պահանջել, վոր

ամեն մի նոր յեկած մարդ քննության յենթարկվի և, յեթե հարկավոր է, մտցրվի ցուցակէ մեջ:

Պրոֆքինինացման պետք է յենթարկվի ամեն մի աշխատավոր, վորը տվյալ մոմենտին չունի մալարիայի վորեւէ նշան (պարագիտներ մեծացած փայծաղ, կլինիկական նշաններ և այլն) և արդեն անցած վերջին յերկու որացուցային տարիների ընթացքում չի ունեցել մալարիայի նուպաներ, այսինքն՝ այսպես կոչված մալարիայի տեսակետից գործնականում առողջ մարդը: մյուս բոլոր անձինք պիտի յենթարկվեն բուժական քինինացման:

Պրոֆիլակտիկ քինինացման պիտի յենթարկվեն առաջին հերթին իրենք՝ աշխատողները (բանուժ), իսկ յեթե հնարավորություն և հարմարություն կա, ապա նաև նրանց ընտանիքի անդամները:

Պրոֆքինինացման համար կարելի յե ոգտագործել վոչ միայն խինինը, այլ նաև հակամալարային սինթետիկ պրեպարատներ՝ պըլլազմոխին, պլազմոցիդ, ստերբին, ակրիխին՝ համապատասխան դոզաներով:

7) Բուժական ֆինիկացում. — Յեթե տրուպ հիմնարկների գոյության հենց առաջին տարիներէից սկսած մինչև այժմ թված միջոցառումները միշտ ել կիրառվել են այս կամ այն չափով, ապա նույնը չի կարելի ասել բուժական քինինացման մասին:

Ճիշտ է, թե տրուպ հիմնարկները և թե

մյուս բուժպրոֆիլակտիկ կազմակերպությունները միշտ զբաղվել են հիվանդների բուժման գործով, բայց այդ աշխատանքը շատ աննշան չափով է տվել այն արդյունքը, վորպեսին պիտի ստացվի: Դրա պատճառը յեղել է այն, վոր բուժումը մինչև 1934 թ. կատարվել է ինքնահոսի կարգով, վորպես որենք՝ բուժման է յենթարկվել միայն նա, ով ինքն է դիմել տվյալ հիմնարկը և այդ բուժումը տեւել է այնքան ժամանակ, վորքան ցանկացել է նույն հիվանդը: Իսկ յերկար տարիների փորձը ցույց է տվել, վոր այդ ցանկությունը հիվանդի մեջ տեւել է ճիշտ այնքան ժամանակ ինչքան ժամանակ մալարիան ակտիվ բնույթ է ունեցել: Հետևանքն այն է յեղել, վոր մալարիայի նուպաները վերանալուց հետո, հիվանդը դադարել է բուժվել, հիվանդությունն ընդունել է խրոնիկական բնույթ և ամեն տարի համարյա նորոգվելով, շարունակել է ազդել թե մարդու ֆիզիկական դրության վրա և թե նրանից աշխատանքի որեր է խլել:

Շատ քիչ դեպքեր են յեղել, յերբ բուժող հիմնարկն ակտիվ կերպով վնտրել է բուժումն անժամանակ ընդհատած հիվանդին և միջոցներ է ձեռք առել բուժման կուրսը մինչև վերջը շարունակելու համար:

Վոր դա իրոք այդպես է յեղել, ապացուցվում է հենց նրանով, վոր ըստ վիճակագրական տվյալների ամեն մի առաջնակի դիմող մալարիկ տարվա ընթացքում ունեցել է միջին

Թիվով 2—3 հաճախում. պարզ է, վոր այդպիսի բուժումը չէր կարող տալ դրական արդյունք, չէր կարող ազատել բուժվողներին հիվանդությունից և անվտանգ դարձնել նրանց, վորպես վարակի աղբյուր՝ առողջներին համար, քանի վոր մալարիայի լիակատար բուժումը պահանջում է անհամեմատ ավելի յնրկար ժամացնի:

Ներկայումս հազիվ թե վորչեմե տարակայան կամ այլ բուժհիմնարկ կարողանա յեռաչխավորել, վոր մինչև 1934 թ. բուժման յենթարկված հիվանդների գոնե 5 0/0-ը բուժման յրիվ կուրս անցած լինի:

Ահա այս ասպարիզում է, վոր դիուզանսերացումը պետք է հիմնական փոփոխություն մտցնի:

Նախ և առաջ պետք է վերացվի հիվանդների բուժումն ինքնահոսի կարգով: Բուժումը, վորը մինչև վերջին ժամանակներս վորպես որենք կիրառվում էր բուժհիմնարկության մեջ, պետք է փոխադրվի արտադրության վայրը, դաշտը, հանրակացարանը և այլն: Բժիշկը չպիտի սպասի, վոր հիվանդը դիմի իրեն, զա բուժհիմնարկ, այլ ինքը պիտի դիմի դեպի արտադրություն, դեպի աշխատավոր մասսաները, փնտրի ու գտնի նրանց մեջ հիվանդներին և սկսի բուժել. և բուժել սխտեմատիկորեն մինչև վերջը, մինչև հիվանդության նշանների իսպառ անհետանալը, բարոյական ազդեցություն գործադրելով այն ան-

ձանց նկատմամբ, վորոնք անգիտակցորեն խուսափում են բուժումը լիովին կիրառելուց:

Այդ դեպքում միայն կարելի կլինի ասել, վոր բուժաշխատանքը արդյունավետ է, և վոր այն ցենսներներով և տասնյակ ցենսներներով խինինը, վորը ծախսվում է ամեն տարի, ծառայում է իր հիմնական նպատակին, ազանում է հիվանդների սրգանիզմը պարագիտներին:

Դիսպանսերացման կարգով կատարվող բուժումը պիտի ունենա նաև մի այլ առանձնահատկություն—նաև պիտի կրի մասսայական բնույթ. այդ թեկադրվում է թե կարճ ժամանակում ավելի խոշոր թվով հիվանդներ յնդգրկելու անհրաժեշտությամբ և թե նրանով, վոր միայն բոլոր պարագիտ ունեցողների (պերիֆերիկ արյան մեջ, թե ներքին սրգաններում) լիակատար բուժմամբ կարելի յե վերացնել վարակի աղբյուրը և ապահովել առողջներին:

Բուժական քինինացման պիտի յենթարկվեն այն բոլոր անձինք, վորոնք աշխատավորության տվյալ խմբի գլխավին հետադրուման ժամանակ չեն գտնվել գործնականում առողջ, այսինքն՝ մալարիայի վորևե որյեկտիվ նշաններ ունեցողները (պարագիտ, մեծացած փայծաղ) կամ վորոնք իրենց անամնեզի մեջ անցած յերկու ուրացույցային տարիների ընթացքում մալարիայի նոպա, բեցիդիվ են ունեցել:

Բուժական քինինացման վերաբերմամբ առաջադրվող հիմնական պահանջները նույնն են, ինչ վոր պրոֆքինինացման վերաբերմամբ յեղածները: Այստեղ առանձին ուշադրություն պիտի դարձնել բուժման կուրսի կանոնավոր ընթացքի վրա և ավելի լայն չափով պիտի իրագործել բժշկական կոնտրոլը: Խինիզատորը (բոնիֆիկատորը) բուժական քինինացման ժամանակ հանդիսանում է սոսկ տեխնիկական կատարող ա՛յն ցուցմունքների, վոր տալիս է բժիշկը: Իսկ վերջին ամեն մի հիվանդի վերաբերյալ պետք է անհատական մոտեցում ունենա և դրանից յեղնելով միայն նշանակի բուժումը:

Թեև այստեղ բուժումը կատարվում է բուժհիմնարկի պատերից դուրս, արտադրության մեջ, դաշտում և այլն, այնուամենայնիվ բժիշկը պիտի միշտ տեղյակ լինի հիվանդության ընթացքին և հարկ յեղած դեպքում փոփոխություններ մտցնի: Իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր վեցորյակի ընթացքում նա առնվազն յերկու անգամ պատահի բուժման յենթարկվողներին (առանց նրանց կտրելու արտադրությունից) ու ծանոթանա բուժման հետևանքներով առողջացող ոբյեկտիվ և սուբյեկտիվ յերևույթներին:

Ամեն մի հիվանդի համար բժիշկը պիտի ունենա հիվանդության պատմություն (կամ հատուկ դիսպանսերային քարտ), վորի մեջ պիտի գրանցվեն բոլոր նկատված փոփոխու-

թյուններ: Առանձին ուշադրություն պիտի դարձնել փայծաղի վիճակի և նրա եվոլյուցիայի վրա, պարազիտների վորակի և քանակի շարժման, ինչպես և հիվանդի ինքնազգացման վրա:

Բուժման կուրսն ավարտելուց հետո, հիվանդը նորից պիտի յենթարկվի մանրամասն քննության և միայն մալարիայի բոլոր նշաններն իսպառ բացակայելու դեպքում՝ նրան պիտի համարել գործնականում առողջ և դասել այդպիսիների շարքում: Իսկ յերբ յեզրափակիչ քննությունը պարզի, վոր հիվանդը դեռ բուժված չէ, վոր հիվանդության բոլոր նշաններն ու արտահայտությունները դեռ չեն վերացել, այդ դեպքում կարճ (մոտ մեկ ամիս) ընդմիջումից հետո, նրան պետք է կրկինակի բուժման յենթարկել:

Հիվանդներին խինին (կամ այլ դեղ) պետք է բաժանվի նույն ձեվով, ինչպես այդ կատարվում է պրոֆիլակտիկ քինինացման դեպքում, այսինքն՝ խինիզատորը, վորը պիտի 200-ից մինչև 400 մարդու քինինացում կատարի, պիտի ունենա իր ձեռքի տակ հատուկ տետրակ, վորի մեջ նշանակված պիտի լինի բոլոր հիվանդների անուն-ազգանունը և քինինացման որերը: Այդ ցուցակները կարելի յե փոխարինել կարտոնից պատրաստած հատուկ քարտերով, վորոնց մեջ բացի հիշած տվյալներից կարելի յե նշել նաև հիվանդին վերաբերվող մի շարք այլ տեղեկություններ: Այստեղ ևս, ամեն

անդամ խինին տալիս պետք է համապատաս-  
խան նշում կատարել—ցուցակի կամ քարտի  
մեջ:

Ինչ վերաբերում է բուժման ձևերին,  
այս ուղղութեամբ մենք դեռ չենք կարող ցույց  
տալ մի ունիվերսալ ձև, վոր կարելի լինի  
կիրառել բոլոր դեպքերում ու պայմաններում:  
Ինչպես հայտնի յե մալարիայի բուժման հա-  
մար առաջարկված են բազմաթիվ մեթոդներ.  
այդ հենց ապացույց է այն բանի, վոր մենք  
դեռ չունենք կատարյալ ձև:

Այդ ձևերից մասսայական բուժման հա-  
մար նպատակահարմար են այն ձևերը, վոր-  
ոնք, նախատեսնում են ընդհատովող բուժման  
կուրս, քանի վոր նրանք հնարավորութեան են  
տալիս ավելի խոշոր կոնտինգենտ ընդգրկել  
(մի կամ քի ընդմիջումն ոգտապործվում է մյուս  
կամ քի քինինացման համար): Ամենալավ մե-  
թոդը պիտի համարել այն, վորի կիրառման  
դեպքում ծախսելով նվազագույն չափով խինին  
(կամ այլ դեղ) ամենակարճ ժամանակամիջո-  
ցում մաքսիմալ եֆեկտ են ստանում: Իսկ բուժ-  
վողին արտադրութեանից չկտրելու անհրա-  
ժեշտութեանը պահանջում է դործադրել այն-  
պիսի մեթոդ, վորի դեպքում նույն որվա ըն-  
թացքում կարիք է լինում խինին ընդունել մի-  
այն մեկ կամ ամենաչատր յերկու անգամ, այ-  
լապես անհնարին է մասսայական բուժման  
ժամամանակ նույն հիվանդին պատահել 3—4

և ավելի անգամ: Այդ իսկ պատճառով անկե-  
րառելի յե այտեղ, որինակ, Նոխտի մեթոդը:

Մասսայական և միաժամանակ առանց  
արտադրութեանից կտրելու բուժում կիրառե-  
լու հարցը դեռ նոր է, այդ ուղղութեամբ յե-  
ղած փորձը թե մեզ մոտ և թե Միութեան  
մյուս մասերում շատ սահմանափակ է, ուստի  
ամեն մի նոր աշխատանք, վոր կատարվում է  
այդ ասպարիզում, պետք է միևնույն ժա-  
մանակ կրի և նոր ուսումնասիրութեան բը-  
նույթ, փորպեսզի կարելի լինի մոտ ապագա-  
յում մշակել, գտնել մեր պահանջներին բավա-  
րարող լավագույն մեթոդներ:

Տարբեր հեղինակների կողմից առաջար-  
կված ձևերը (անհատական բուժման համար)  
նախատեսնում են հիվանդին տալ բուժման  
ամբողջ կուրսի ընթացքում տարբեր քանակու-  
թեամբ խինին (15-ից մինչև 45 և ավելի):  
Նոր ձևեր մշակելիս և փորձելիս պետք է  
ձգտել գտնելու խինինի այն նվազագույն քա-  
նակը և դործածելու այն ձևը, վորոնք ամենա-  
կարճ ժամանակամիջոցում մարդուն ազատում  
են իր հիվանդութեանից:

Չունենալով դեռ լիովին ստուգված մե-  
թոդներ, այնուամենայնիվ հնարավոր ենք հա-  
մարում առաջադրել մի քանի մեթոդներ, վոր-  
ոնք մեր առաջարկութեամբ մի քանի արուպ-  
կայաններում գործադրվել են և ըստ նախնա-  
կան տվյալների դրական արդյունք են տվել:  
Նրանց իրական նշանակութեանը պարզելու

համար, անհրաժեշտ է զուգընթացաբար փորձել և այլ մեթոդներ հիվանդների նույնանման խմբերի վերաբերմամբ:

Այդ մեթոդները հետևվյալներն են.

1. Վեցորյակի հինգ որը տրվում է խինին 0,5, իսկ վեցերորդ որը հանգիստ. այդպես շարունակվում է ութ վեցորյակ և կուրսի ընթացքում ընդամենը տրվում է 2,5 X 8=20,0 խինին: Մալարիայի համաճարակի խիստ բուժանկաման ժամանակ 0,5-ի փոխարեն կարելի չէ տալ 1,0 և այդ դեպքում դուրսումը շարունակել չորս կամ հինգ վեցորյակ: Քանի վոր մեկ գրամ խինինը միանվագ ընդունելուց հետո կարող են անսխորթ յերևույթներ առաջանալ, (ականջներում աղմուկ, թուլութուն և այլն), վորոնք ազդում են աշխատանքի արտադրողականության վրա, ուստի թե վերջին դեպքում և թե այլ մեթոդներով քինինացում կատարելիս, յերբ պետք է որական տալ 1,0 կամ ավել պետք է այդ դոզան բաժանել յերկու մասի՝ 0,5 տալ աշխատանքի սկզբին, իսկ 0,5՝ աշխատանքը վերջացնելուց քիչ առաջ:

Առաջադրած ձևի քինինացում կիրառելիս կարելի չէ փորձել՝ 0,5-ի փոխարեն տալ 0,6, իսկ 1,0-ի փոխարեն՝ 1.2 (չորս տարբերակա՝ 0,3: Այդ ցանկալի յե անել մանավանդ այն դեպքում, յերբ գործ է անվում վոչ թե chininum hydrochloricum այլ chininum sulfuricum:

2. Վեցորյակի հինգ որը տրվում է 1,0 կամ

1,2 խինին, իսկ վեցերորդ որը, ինչպես և հետևյալ վեցորյակի ընթացքում տրվում է հանգիստ: Հետո, նորից նույն ձևով հինգ որը տրվում է խինին և 7 որով ընդհատվում: Այդ կրկնվում է չորս կամ հինգ անգամ և ամբողջ կուրսի ընթացքում տրվում է 20—25 գրամ խինին (իսկ 1,2 դոզայի դեպքում 24—30 գրամ):

3. Վեցորյակի առաջին յերեք որը տրվում է մեկական (կամ 1,2) գրամ խինին, իսկ մնացած յերեք որով ընթացքում վոչինչ չի տրվում. այսպես շարունակվում է 12-ից 16 վեցորյակ: Այդ դեպքում նպատակահարմար է քինինացում կատարել միաժամանակ նաև յերկրորդ խմբի մեջ, ողտագործելով առաջին խմբի համար յեղած հանգստի որերը, այսինքն՝ վեցորյակի 4-րդ և 5-րդ որերը: Այդ դեպքում 4-րդ որը պիտի տալ 1,5 (յերկու նվագ, ամեն անգամ 0,75), իսկ հինգերորդ որը՝ 0,5, մյուս որերը հանգիստ տալ:

Ինչ ձևով էլ կատարվի բուժ քինինացումը, անհրաժեշտ է ուսումնասիրել նրա հետևանքները, վորպեսզի այդպիսով կարելի լինի մասսայական կիրառման համար ամենանպատակահարմար և ամենաարդյունավետ ձևն ընտրել: Բուժման արդյունքները պետք է գնահատել, յելնելով նրանից, թե վորքան հաճախ է տեղի ունենում հիվանդության ռեցիդիվը, բուժման լրիվ կուրս անցածների մեջ, վորքան արագ են ընդհատվում

նուպաները բուժումն սկսվելուց հետո, վորքան արագ են անհետանում պարագիտները և վերջապես վորքան հարմար է տվյալ ձևը մասսայական կիրառման համար՝ տեխնիկական տեսակետից:

Բուժման լրիվ կուրս անցած և յեզրափակիչ քննության ժամանակ առողջ ճանաչված հիվանդները գրանցվում են առողջների ցուցակում: Յեթե տվյալ վայրում առողջների պրոֆքինինացում է կիրառվում, ապա նրանք ևս պրոֆքինինացման են յենթարկվում: Յերբ դրա կարիքը չի լինում, առողջացածները մնում են բժշկական հսկողության տակ և պարբերաբար քննության են յենթարկվում:

Աշխատավորության տվյալ խմբի բուժումը հիմնականում ավարտելուց հետո, անցնում են մյուս խմբերին (ցեխեր, հիմնարկներ, կոլտնտեսություններ և այլն): Սակայն արդեն մշակման յենթարկված խմբերը չպետք է աչխաթող արվեն, այլ պետք է մնան մշտական հսկողության տակ. նրանց վերաբերմամբ ևս պետք է շարունակ տվյալ պայմաններում անհրաժեշտ պրոֆիլակտիկ միջոցներ կիրառել (պոլոզիդացիա և այլն), վորովհետև այլապես նախկին գրության ռեցիդիվ տեղի կունենա:

8) Սանյուսաշխատանքները. Դիսպանսերացման գործի հաջողության համար խոշորագույն նշանակություն ունեն սանյուս-

աշխատանքերը: Մասսաների մեջ կատարվող վոչ մի աշխատանք չի կարող լիակատար հաջողություն ունենալ, յեթ այդ մասսան լավ չի դիտակցել կատարվող աշխատանքների իմաստը, յեթե նրա ակտիվը անհրաժեշտ ուժանդակություն ցույց չի տալիս:

Մինչև դիսպանսերացման անմիջական աշխատանքներն սկսելը հարկավոր է նախագծած աշխատանքները համաձայնեցնել թե հիմնարկ-ձեռնարկների, կոլտնտեսության վարչության և թե տեղի կուս. և պրոֆկադմակերպությունների հետ, հաշվի առնելով նրանց ցուցմունքներն ու խորհուրդները, մտցնելով պլանի մեջ նպատակահարմար փոփոխություններ:

Դրանից հետո, նույն կազմակերպությունների մասնակցությամբ, անհրաժեշտ է աշխատավորությանը, վորքան կարելի յե լայն ժողովներում, բացատրել կիրառվող միջոցառումների նշանակությունն ու նպատակները, պարզաբանելով այն խնդիրները, վորոնք կառավարվեն մասնակցողների կողմից:

Աշխատանքներն սկսելուց հետո ել, պետք է ոգտվել ամեն մի առիթից, թե՛ ժողովներում և թե՛ խմբական ու անհատական զրույցների ժամանակ պարբերական ինֆորմացիա տալ կատարվող աշխատանքների ընթացքի և նրանց հաջողությունների ու խոչնդոտների մասին: Միևնույն ժամանակ հարկավոր է առանձին ուչադրություն դարձնել այն ընկերների վրա,

վորոնք առանձին հետաքրքրութուն են ցույց տալիս դեպի առողջապահական խնդիրները, պետք է նրանց հետ անհատական զրույցներ ունենալ, բարձրացնել նրանց մտավոր զարգացման մակարդակը սանիտարական— առողջապահական ասպարիզում և հետզհետե դարձնել նրանց մեր ակտիվ ողնականներն ամեն մի ցեխում, դաշտում, հանրակացարանում և այլն:

Սանլուսաշխատանքները պետք է սխտեմատիկ բնույթ կրեն: Առողջապահական տարրեր կամ պանիաների ժամանակ նրանք պետք է ավելի ուժեղացվեն, բայց նախնայից դուրս ել չպիտի մոռացության տրվեն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է սանլուս աշխատանքներով չձանձրացնել ունկնդիրներին, իսկ այդ պատահում է բավական հաճախ, յերբ բժիշկը հաշվի չի առնում մի շարք հանգամանքներ:

Լինում են դեպքեր, յերբ նույն խնդրի վերաբերյալ զումարվում են մի շարք ժողովներ, և ամեն անգամ խոսում են միևնույն հարցերի մասին: Ժողովին մասնակցողները, չստանալով վորևէ նոր բան, կորցնում են իրենց հետաքրքրութունը դեպի զրույցը և շատ շուտ դադարում ժողովներին մասնակցելուց:

Հաճախ, խիստ ձանձրացնում են նրանց յերկար ու ձիգ զեկուցումները, յերբ բժիշկը, մոռանալով, թե ինչպիսի ունկնդիրներին

հետ դործ ունի և տարվելով իր նյութով ցանկանում է դրսեվորել իր ամբողջ խմացացածը: Նման վոչ կոնկրետ զեկուցումներից պետք է խուսափել: Առհասարակ նպատակահարմար է վորքան կարելի յե զեկուցումները փոխարինել զրույցներով, հարց ու պատասխանի ժողովներով, ջանալով այդպիսի ժողովներին մասնակից դարձնել առավելագույն թվով ժողովականներ:

Այդպիսի դեպքերում, ժողովի ղեկավարը, ինքը պետք է կարողանա համապատասխան ուղղութուն տալ զրույցին: Իսկ յերբ անհրաժեշտ է զեկուցում անել, ապա պետք է ընտրել տվյալ նույթից ամենազլխավորը, ամենաակտուալ հարցերը և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել նրանց վրա, աշխատելով պարզաբանել հենց տվյալ շրջապատից վերցրած կենդանի, շատերին ծանոթ որինակներով: Զեկուցումները չպետք է կես ժամից ավելի տևեն:

Շատ ոգտակար են և լավ արդյունքներ են տալիս ավելի կարճատև (5-10 րոպե) զրույցները, վորոնք կազմակերպվում են բուժարանները դիմող հիվանդներին համար, նախքան նրանց ընդունելը: Բայց այդտեղ ևս պետք է խուսափել ծայրահեղություններից, չպետք է այնպես անել, վոր դրանց պատճառով ծանր հիվանդները կամ յերեխաները ստիպված լինեն յերկար սպասել, կամ

աշխատանքի գնացողները կորցնեն իրենց ժամանակը: Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, վոր հաջողութեամբ կարելի չէ սանլուս աշխատանքներ ծավալել նաև կողմնատեսական դաշտերում, բրիգադներում, ոգտագործելով հանգստի ժամերը և կազմակերպելով կարծատե զբույցներ (բայց վոչ գեկուցումներ):

Տեղի սղութեան պատճառով, մենք հնարավորութեան չունենք խոսելու սանլուս աշխատանքների տարբեր ձևերի մասին. կչեչտենք միայն, վոր ինչ ձևով ել կատարվելիս լինեն նրանք, անհրաժեշտ է մաքսիմալ չափով ոգտագործել զանազան դիտողական պարզանքներ, վորոնք ավելի կոնկրետացնում են նյութը, դարձնում նրան ավելի մատչելի, ավելի հասկանալի:

|||

### ԲԺՇԿԱ.-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՍՊԱՆՍԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Յեթե հաշվի չառնենք առանձին բացառութեաններ, մինչև վերջին տարիները մալարիայի դեմ կատարվող պլանային (և արտապլանային) աշխատանքները կազմում էին տրոպիկամարկների մենաչնորհը: Բժշկասանիտարական մյուս հիմնարկները կամ բոլորովին չէին մասնակցում այդ աշխատանքներին,

կամ ել այդ մասնակցութեանը կայանում էր նրանում, վոր նրանք այլ հիվանդների շարքում ընդունում և բուժում էին նաև մալարիկներին: Բայց շատ դեպքերում այդ բժշկութեան վորակն այնքան ցածր էր, վոր ամենամեծ արդյունքը, վոր ստացվում էր նրանից, դա նոպաների դադարումն էր: Նման բուժման ընթացքում շատ քիչ թվով հիվանդներ էին կարողանում լիովին ազատվել մալարիայի պարագտներից և առողջանալ: Միայն հազվագյուտ դեպքերում այդ մասնակցութեանը տարածվում էր նաև պրոֆիլակտիկ աշխատանքների վրա:

Նման դրութեանը միանգամայն անհանդուրժելի պիտի համարել դիսպանսերացման աշխատանքների ընթացքում: Դիսպանսերացումն այնքան է ընդլայնում ու բազմաէրզմանի դարձնում մալարիայի դեմ կատարվող աշխատանքները, իսկ մյուս կողմից՝ մալարիան այնքան լայն է տարածված հանրապետութեան սահմաններում, վոր բոլորովին հնարվոր չէ այդ գործը հանձնարարել միայն տրոպիկամարկներին: Չխոսելով այն շրջանների ու կենտրոնների մասին, ուր բոլորովին դեռ տրոպիկամարկներ չկան, նույնիսկ վերջինների կողմից սպասարկվող վայրերում դիսպանսերացումը լիովին իր բոլոր անհրաժեշտ մանրամասնութեաններով կարող է կիրառել միայն այն դեպքում, յեթե

նրա աշխատանքներին ակտիվ կերպով մասնակցեն տեղում գոյութունն ունեցող բժշկա—սանիտարական հիմնարկները, անկախ նրանց բնույթից ու պատկանելիութունից:

Տրոպիկալ հիմնարկը պետք է այստեղ հանդես գա կազմակերպչի, ոգնողի դերում: Ստանալով մասնագիտական դիտա—մեթոդական ղեկավարութուն Տրոպիկալ սանիտարիայից, նա տեղի շրջանային առտեսչի հետ համաձայնեցրած կերպով և նրա հավանությամբ ու ոգնությամբ պետք է ամենակտիվ կերպով դիսպանսերացման աշխատանքների մեջ ներգրավի տեղի բժշկեր բժիշկներին:

Վտրտեղ չկա տրոպիկալ հիմնարկ, բայց կա մալարիա, այնտեղ աշխատանքները պիտի գլխավորի շրջանի կամ տեղի սանիտարական բժիշկը, վորը պիտի կապ հաստատի մոտակա տրոպիկալ հիմնարկի կամ Տրոպիկալ սանիտարիայի հետ և ստանա այնտեղից համապատասխան հրահանգներ ու ցուցմունքներ:

Այժմ բժշկի համար պարզ է, վոր մալարիայի տարածման շրջաններում ու վայրերում նրա ազդեցութունն արտահայտվում է բժշկա—սանիտարական աշխատանքների բոլոր ասպարեզներում: Թե հիվանդանոցի կամ բժշկարանի բժիշկը և թե կոնսուլտացիայի, դպրոցա—սանիտարական կամ սանիտարական բժիշկներն իրենց առօրյա գործունեությունը ընթացքում շարունակ հանդիպում են մալարիայի բացասական ազդեցության արդյունքներին և ստիպված են լինում ձեռք առնել այս կամ այն միջոցը: Ահա այդպիսի պատահական միջոցների փոխարեն, պիտի ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, վորոնք կարողանան տալ ավելի լրիվ, ավելի արդունավետ հետևանք:

Ուստի հակամալարիային պայքարը, դիսպանսերացման աշխատանքները պետք է կազմի նրանց աշխատանքների հիմնական մոտեցումներից մեկը:

Վտրպեսզի կարելի լինի բոլոր բժիշկներին կողմից կատարվելիք աշխատանքները համաձայնեցնել իրար հետ, նրանց մեջ անհրաժեշտ հետևողականութուն մտցնել ու դիտական հողի վրա դնել այն, հարկավոր է ունենալ աշխատանքի մանրամասն մշակված ընդհանուր պլան:

Պլանը պիտի կազմվի առբաժվարի ակտիվ մասնակցությամբ տեղի տրոպիկայանի կամ տրոպիկալ սանիտարի, իսկ նրանց բացակայության դեպքում, սանբժշկի կողմից: Նրա ընտելությանը մասնակից պիտի լինեն բոլոր բժիշկները և միջին ու կրտսեր անձնակազմի ակտիվը: Աշխատանքների բաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ամեն մի բժիշկի աշխատանքի առանձնահատկությունը, նրա պատրաստականութունը, ծանրաբեռնվածութունը և այլն, վորպեսզի հանձնարար-

վող աշխատանքները կոնկրետ կեպով իրա-  
զործվեն և չմնան թղթի վրա: Պլանում պի-  
տի նախատեսանվի, թե վո՞ր հիմնարկ-ձեռ-  
նարկությանն է կցվում ավելի բժիշկը և դիա-  
պանսերացման աշխատանքների ամբողջ կոմպ-  
լեքսի վո՞ր մասերն են հանձնարարված նրան:

Անհրաժեշտ է պարբերաբար կազմակեր-  
պել դիսպանսերացման աշխատանքներին մաս-  
նակցող բժիշկների (և միջին պերսոնալի)  
խորհրդակցություններ, քննության առնել  
կատարվող աշխատանքները և մացնել նրանց  
մեջ անհրաժեշտ փոփոխություններ, ճշ-  
տումներ:

IV.

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Կասկածից դուրս է, վոր դիսպանսերա-  
ցումն ունի խոչորագույն դրական նշանակու-  
թյուն մալարիայի դեմ մղվող պայքարի հա-  
մար: Սակայն մինչև այժմ նա մասնաշաղկապ  
ձևով՝ լայն կիրառում չի ունեցել և այդ պատ-  
ճառով կոնկրետ թվերով դեռ հնարավոր չի  
ապացուցել նրա առավելագույն դերն ավելի  
բարձր արդյունքներ ստանալու համար:

Ուստի միանգամայն անհրաժեշտ է, դիա-  
պանսերացում կիրառելիս ամենաուշագիւր ու  
ամենամտնրամասն կերպով, ուսումնասիրել  
նրա արդյունքները, մի խնդիր, վորը ներկա-

յումս խոչոր դիտական-գործնական հետա-  
քրքրություն է ներկայացնում:

Մալարիայի դեմ մղվող պայքարի հետե-  
վանքները պարզելու համար, մենք ունենք  
բավական բազմատեսակ ցուցանիշներ. հիմն-  
վելով նրանց վրա, առանց վորևէ դժվարու-  
թյունների կարելի յե գնահատական տալ  
ձեռնարկած միջոցառումների կոնկրետ նշա-  
նակության մասին: Այդ ցուցանիշներից ա-  
վելի կարևոր ենք համարում հետևյալները՝

ա) Մալարիայի պատճառով կորչող աշ-  
խատանքային ուրերի թվի նվազեցումը. Հա-  
յաստանի սահմաններում մինչև այժմ կա-  
տարած դիսպանսերացման աշխատանքներն  
ապացուցել են (Դավալու, Ղափան), վոր այդ  
ցուցանիշը կարճ ժամանակում դրսեվորում  
է կիրառված միջոցառումների դրական արդ-  
յունքը:

Աշխատանքի ուրերի նկատմամբ յեղած  
փոփոխությունները, նրանց բացարձակ թվե-  
րը պետք է տալ վոչ միայն վորպես այդպի-  
սին, այլ սնպայման վերածել նաև հարաբե-  
րական թվերի, համեմատելով բանվորների,  
ծառայողների, կոլտնտեսականների և այլնի  
թվի հետ, ինչպես և այլ հիվանդությունների  
պատճառով կորցրած աշխուրերի հետ: Կորց-  
րած աշխուրերի մասին տեղեկություններ  
պետք է հավաքել սիստեմատիկաբար (կող-  
տնտեսության գրասենյակում, ապգանձարկի

վճարման կետում, բուժհիմնարկի բժշկի մոտ  
և այլն), հակառակ դեպքում յերկար ժամա-  
նակաշրջանի վերաբերյալ տեղեկություններ  
ստանալը շատ դժվար կլինի: Ավելի նպատա-  
կահարմար է ավյալ շրջանի, վայրի բոլոր  
բուժկետերում կատարել ամենօրյա հաշ-  
վառում տրված բյուրեղների հիման վրա:

բ) Մալարիայով տառապողների թվի  
տատանումները ցույց տվող տեղեկություն-  
ները, վորոնք միշտ լինում են բուժարաննե-  
րում և այլ բուժկայաններում: Անհրաժեշտ  
է միայն միջոցներ ձեռք առնել, վոր կանո-  
նավոր կերպով կատարվի հիվանդների ցու-  
ցակազրումը և մանավանդ նրանց առաջնա-  
կի դիմումները, վորպեսզի նույն հիվանդը  
ավյալ տարվա ընթացքում կրկնակի չարձա-  
նազրվի վորպես առաջնակի դիմող, մի սխալ,  
վորը հաճախ է տեղի ունենում թե զյուրե-  
րում և թե քաղաքներում:

գ) Մալարիայի հիվանդների մեջ բու-  
ժումն ավարտելուց հետո նկատված ուղի-  
ղիվների քանակը և 0/0-ը: Այդ ավյալները  
մասնավորապես խոշոր նշանակություն կու-  
նենան բուժման ավելի ուղիղում ձևերի մշա-  
կման համար (մասսայական կերպուման նպա-  
տակով):

դ) Աշխատանքի արտադրողականութունը,  
վորը հաճախ սերտ կապ է ունենում նաև  
մալարիայի հետ: Այդ ուղղությամբ յեղած

հիտիստությունները պարզելու համար, ավելի  
նպատակահարմար է ուսումնասիրել արտա-  
դրողականության ցուցանիշները մալարիայով  
հիվանդ բանվորների կամ կոլտնտեսականների  
մեջ՝ բուժումից առաջ և նրանից հետո: Այդ-  
պիսի համեմատություն անելու համար, պետք  
է վերցնել վորքան կարելի յե բազմամարդ-  
խմբեր՝ կողմնակի ազդեցությունների նշանա-  
կությունը պարզելու և ազդեցությունը միևի-  
մումի հասցնելու համար:

յե) Մահացությունը մալարիայի հետե-  
վանքով:

զ) Վիժումների և վաղաժամ ծնունդների  
թիվը և 0/0-ը նորմալ ծննդաբերության մեջ:

ը) Ազդարնակության Փիզիկական շարժ-  
ման ցուցանիշները (ծնունդ, մահացություն,  
աճ):

թ) Ազդարնակության Փիզիկական դրու-  
թյան ցուցանիշները, վորոնք ստացվում են  
պարզ հետազոտություններ կատարելուց հետո  
և այլն:

Թված, ինչպես նաև մի շարք այլ ցուցա-  
նիշներ պերնախոս կերպով կբնորոշեն կատա-  
րվող աշխատանքների արդյունքները: Ավե-  
լորդ չի լինի կրկին չեչտել, վոր նման աշխա-  
տությունները կարող են նշանակություն ունե-  
նալ միայն այն դեպքում, յերբ նրանք հիմնվում  
են ճշգրիտ և խնամքով հավաքված ավյալնե-  
րի վրա: Ուստի և պրանձին ուչազրության

առարկա պիտի լինի սկզբնական նյութերի համարումը, աշխատանքի ամեն մի մոմենտի, յուրաքանչյուր դեպքի, թվի ճշտությունը և լրիվ լինելը:

Այդ աշխատությունները նպատակ ունեն պարզելու վոչ միայն դիսպանսերացման նշանակությունը, վորը կասկածից դուրս պիտի համարել, այլև պետք է բնութագրեն կատարվող աշխատանքների վորակը: Նրանք թվանշան ու գնահատական են աշխատանքը դեկավարող և կատարող հիմնարկությունների ու բժիշկների համար: Բացի դրանից նման ուսումնասիրությունները գիտական խոշոր հետաքրքրություն են ներկայացնում և կարող են մեծ չափով ազդել ժողովրդական տնտեսության միջոցներն ավելի խնայողաբար ոգտագործելու վրա:

V.

### ԳԻՍՊԱՆՍԵՐԱՅՈՒՄԸ ՅԵՎ ՇԱՀԱԳՐԳՈՒՎԱԾ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դիսպանսերացման բոլոր աշխատանքները կազմակերպվում, գլխավորվում ու կատարվում են բժշկական և առհասարակ առողջապահական պերսոնալի կողմից:

Բացառություն են կազմում միայն հիւրուտեխնիկ աշխատանքները, վորոնց անմիջական դեկավարությունն ընկնում է մասնագետ ինժեներ-տեխնիկական կազմի վրա, բայց այդ

դեպքում էլ դիսպանսերացման աշխատանքները գլխավորող բժշկա-նանիտարական հիմնարկը պետք է միանգամայն տեղյակ լինի աշխատանքներին, պետք է նախորոք ծանոթանա նրանց ծրագրին, տա իր համաձայնությունը և ունենա սիստեմատիկ հսկողություն՝ պլանի իրագործման վերաբերմամբ: Միայն փոքր, տարրական հիւրուտեխնիկական աշխատանքները կարող են կատարվել առանց տեխնիկական մասնագետ ուժերի մասնակցության:

Ինչ վերաբերում է դիսպանսերացման արդյունքներով շահագրգռված զանազան որդաններին, այստեղ փոխհարաբերությունների խնդիրը պետք է դրվի բոլորովին այլ հողի վրա:

Մալարիան խոշորագույն մնաս է հասցնում վարակված շրջաններում գտնվող ամեն մի տնտեսական կամ այլ բնույթի հիմնարկ-ձեռնարկության շահերին: Մալարիայի դեմ ուղղված ամեն մի եֆեկտիվ միջոց իջեցնում է այդ վնասի չափը, հետեվապես ամեն մի հիմնարկ-ձեռնարկություն ուղղակի կերպով շահագրգռված է այդ միջոցառումների ավելի լայն դործադրմամբ, նպատակ ունենալով միանգամայն ապաստվել մալարիայի վնասակար ազդեցությունից: Բայց այդ շահագրգռվածությունը չի կարող և չպետք է սահմանափակվի լոկ ցանկությամբ, այլ պետք է անպայման արտահայտվի մալարիայի դեմ մղվող պայքար

րի անմիջական բարոյական և նյութական մասնակցութիւնն ցույց տալու ձևով:

Այդ ուղղութեամբ տրոպիկական և առհասարակ բժշկա-սանիտարական հիմնարկութիւնները դեռ շատ բան ունեն անելու, քանի վոր առայժմ դեռ հիմք ունենք ասելու, վոր շամհազրգուված համապատասխան հիմնարկ-ձեռնարկները, շատ դեպքերում տեղի ղեկավար մարմինները դեռ լիովին չեն համոզվել ու գիտակցել, վոր միայն առողջապահական որդաններն ուժերով ու միջոցներով հնարավոր չի հաղթահարել մալարիան:

Առողջապահական մարմինների պարտականութիւնն է՝ տեղական և հանրապետական նյութերի հիման վրա, թե ղեկավար որդանների և թե հիմնարկ-ձեռնարկների համար ապացուցել մալարիայի վնասակար ազդեցութիւնը, թվերով ցույց տալ, թե վորքան ծանր է անդրադառնում մալարիան չրջանի կամ տվյալ որչեկտի տնտեսութեան վրա (աշխարհի կորուստ, համեյլյալ արձակուրդ ու ոտձիկների ավելացում 20<sup>0</sup>/0-ով, աշխատանքի արտադրողականութեան վորոչ անկում, ազգաբնակչութեան ֆիզիկական շարժման նվազում և այլն): Այդպիսի թվեր առանց վորեւէ ղժվարութեան կարելի չէ ձեռք բերել ամեն մի չրջանի համար, յետե փոքր ինչ աշխատանք կատարվի այդ ուղղութեամբ:

Շահազրգուված որդանների մասնակցութեան ինդիքը շոչափված է նաև մեր որեւէ

գրութեան մեջ: Թե ՀՍԽՀ-ի և թե ԱՍՖԽՀ-ի ու ԽՍՀՄ-ի Ժողկոմիտեաների վորոշումներում նույնիսկ ասված է, թե ինչպիսի ինդիքներում պիտի արտահայտվի այդ մասնակցութեանը: Իսկ իրականութեան մեջ հաճախ այդ որդանները մոռանում են կամ հրաժարվում են մասնակցելուց, պատճառաբանելով, վոր բյուջեյով այդ նպատակի համար գումարներ չեն նախատեսված կամ բաց թողնված: Իսկ յերբ մալարիան տարածվում է ավելի լայն շափերով, յերբ վորեւէ կետում բանվորների կամ կորուստեսականների գլխի առկար կտրվում է աշխատանքից մալարիայի պատճառով, այն ժամանակ ամեն ինչ հրապարակ է դալիս ավելի մեծ շափերով, քան հարկավոր էր սկզբում չարիքը կանխելու համար:

Հակամալարային պայքարը ղեկավարող հիմնարկի գործն է՝ այնպես կազմակերպել աշխատանքը, վոր այլևս նման յերեւույթներ չկրկնվեն: Այդ նպատակով հարկավոր է լայն բացատրական աշխատանք կատարել թե հիմնարկ-ձեռնարկների ղեկավարների և թե կուսու պրոֆկազմակերպութեանների և լայն մասսաների մեջ: Անցյալ որինակներն ու փորձը ցույց են տվել, վոր այնտեղ, ուր բժիշկները կարողացել են հաջող բացատրական աշխատանք կատարել, լայն ազիտացիա կազմակերպել մալարիայի դեմ պայքարելու անհրաժեշտութեան շուրջը, միշտ էլ հնարավոր է յեղել

մեծ թվով կողմնակիցներ դառնել և պայքարը դնել համապատասխան հունի մեջ:

Այս կամ այն տնտեսական կամ այլ որդա- նի դիմելիս, անհրաժեշտ է ունենալ կոնկրետ առաջարկներ, վորոնք մի կողմից պիտի վորոշ եֆեկտ խոստանան, իսկ մյուս կողմից՝ պետք է լինեն իրագործելի ու համապատասխանեն տվյալ որդանի նյութական հնարավորություն- ներին և ուժերին: Ուստի նախքան առաջարկ- ներ անելը, անհրաժեշտ է մանրամասնորեն ու- սումնասիրել հարցն իր ամբողջությամբ, կազ- մել անելիքների ծրագիրը ըստ առանձին տարի- ների և, հաշվի առնելով բոլոր աղբյուրները, նախատեսնել ամեն մեկի մասնակցության չա- փըն ու ձևը: Վորպես որենք, ամեն անգամ այդ պետք է անել նախորդ տարվա այն ամիս- ներին, յերբ հիմնարկ-ձեռնարկները դեռ չեն կազմել իրենց նախահաշիվները: Այն շրջան- ներում, ուր գոյություն ունեն տեղական (չբը- ջանային) հակամալարիային կոմիտեներ, պլանների նախագիծը պիտի մանրամասն քննության յեթարկել նրանց նիստերում, վո- բոնց պիտի մասնակցեն շահագրգռված որդան- ների պատասխանատու ներկայացուցիչները: Հակամալարիային կոմիտեյի կողմից ծրագիրը հաստատվելուց հետո, անհրաժեշտ է շահա- գրգռված ամեն մի տնտեսական կամ այլ որ- ցանի հետ պայմանագիր կնքել տվյալ տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մա- սին:

Պայմանագիրը պետք է պարունակի յեր- կու կողմերի (տնտրգանի և առողջապահա- կան մարմնի) պարտականությունները մալար- իայի դեմ մղվող պայքարի ասպարիզում: Յե- թե յերկու կողմերի մեջ պայմանագիր է կընք- վում առողջապահական մյուս ինդըների շուր- ջը ևս, ապա մալարիային վերաբերող հար- ցերը, կետերը կարող են տեղ դառնել այդ պայ- մանագրում: Ամեն մի պայմանագիր պետք է արտացոլի տեղի կոնկրետ պայմաններն ու պա- հանջները և նրանցից յեղնելով միայն պետք է մշակվեն համապատասխան կետերը:

Այդ պատճառով էլ հնարավոր չէ ունիվեր- տալ պայմանագրի ձև տալ: Այստեղ—կարելի յե միայն նշել այն աղղությունը, վորը պիտի բնորոշի, թե ինչ բնույթի աշխատանքներ պի- տի մտնեն տնտրգանի պարտականություն- ների մեջ:

Նախ և առաջ տնտրգանի պարտակա- նության մեջ պետք է մտնեն զանազան հիդրո- տեխնիկական աշխատանքներ կատարելը: Իհարկե պայմանագրի մեջ պիտի մտցնեն մի- այն միջին և փոքր ծավալ ունեցող աշխա- տանքներ, քանի վոր խոշոր մասսիվների չո- րացնելը պահանջում է մեծ գումարներ և մտնում է Հայըրտնտեսության ծրագրի մեջ:

Պայմանագրում անպայման պետք է լայն մասնակցություն նախատեսնվի՝ մոծակներից պաշտպանվելու միջոցառումներ կիրառելու ախատանքներին՝ պատուհանների ցանցապա-

տում, ամբուրիզացիա, բանվորներին և ծառայողներին ծածկոցներ ( П О Д О Г ) մատակարարելը անտորգանի հաշվին—ասա այդ բոլորը պետք է մտնի տնտեսիմնարկի պարտականությունների մեջ:

Հակամալարիային լայն պայքար մղելու համար անհրաժեշտ են ավելի մեծ թվով տեխնիկական աշխատողներ (բժնիֆիկատորներ, խինիզատորներ), վորոնց բուժական հիմնարկը չի կարող պահել էր հաշվին: Անհրաժեշտ է, վոր աշխատակիցների լրացուցիչ թիվը վաղորոք պարզված լինի և նրանց վարձատրումը (ինչպես և առաջադրումը) պետք է գրվի տնտեսորդանի վրա: Տնտորգանի վրա պիտի գրվի նաև փոխադրական միջոցներ տալու պարտականությունը (այնտեղ, ուր բուժհիմնարկը չունի այդպիսին կամ վորտեղ լրացուցիչ փոխադրական միջոցներ են անհրաժեշտ), մանավանդ յերբ արտադրությունը չի կենտրոնացած մի տեղում այլ ցրված է լայն տարածության վրա:

Վորոչ շրջանների համար խոշոր նշանակություն ունի շենքերի խնդիրը, թե առողջահական հիմնարկի (տրոպիկոպանսերի, կայանի) և թե պերսոնալի ապրելու համար: Յեթե ըստ պայմանագրի նախատեսնվում է նոր հակամալարիային հիմնարկություն կազմակերպել, ապա շենք տրամադրելը պիտի մտնի տնտորգանի պարտականությունների մեջ: Նույնը

վերաբերվում է պերսոնալի մատակարարման գործին, մանավանդ այն վայրերում, ուր գործում են միայն տվյալ ճյուղերի բաշխիչները, ճաշարանները և չկան ընդհանուր կոոպերատիվներ, մատակարարող մարմիններ:

Առողջապահական մարմինների պարտականություններն առանձին պարզարանության կարիք չունեն: Նրանք բոլորում են գրքույկի մեջ նշված բազմակողմանի աշխատանքներից, վոր պիտի կատարեն նրանք: Անհրաժեշտ է միայն պայմանագրի մեջ ավելի կոնկրետացնել այդ բոլորը, մատնանշելով նրանց ծավալը և ժամկետները: Ժամկետներ պետք է սահմանվեն նաև տնտորգանի (կամ այլ հիմնարկի) վրա գրված պարտականությունների կատարման վերաբարմամբ:

Կնքված պայմանագրին պետք է ծանոթացնել թե առողջապահական գծով աշխատող բոլոր անձանց և թե տնտորգանի բանվորներին ու ծառայողներին:

Անհրաժեշտ է պարբերաբար, հատուկ հանձնաժողովների կամ բրիգադների միջոցով, վորոնց մեջ պիտի մտնեն յերկու կողմերի ներկայացուցիչները, ստուգել պայմանագրի կետերի կատարման ընթացքը և համապատասխան միջոցներ ձեռք առնել թերությունները վերացնելու համար:



ՆԱԽԱԲԱՆ . . . . .	3
I. Մալարիայի դեմ մղվող պայքարի հերթական խնդիրները . . . . .	5
II. Դիպլոմատիայի հիմնական ելմեները մալարիայի նկատմամբ . . . . .	10
ա) Աշխատավորության հետազոտումը	14
բ) Միջավայրի պայմանների ուսումնա- սիրությունը . . . . .	23
գ) Բնակչության և միջավայրի հետազո- տության արդյունքների համեմա- տությունը . . . . .	36
դ) Հակամալարիային պայքարի ծրագիր կազմելը . . . . .	37
յե) Հակամալարիային միջոցառումների իրագործումը . . . . .	42
1. Նոր արհեստական ճահճացումների կանխարգելումը . . . . .	46
2. Ճահճների չորացում . . . . .	48
3. Դեղարվացիա . . . . .	50
4. Դեղինակցիա . . . . .	52
5. Մեխանիկական պրոֆիլակտիկա . . . . .	54
6. Պրոֆիլակտիկ քիմիանցում . . . . .	56

7. Բուժական քինինացում . . . . .	64
8. Սան-լուս աշխատանքներ . . . . .	74
III. Բժշկա-սանիտարական աշխատությունների մասնակցութունը . . . . .	78
IV. Աշխատանքների արդյունքների ստուգումը . . . . .	82
V. Դիտպաններացումը և շահագրգռված որդան- ների մասնակցութունը . . . . .	86



«Ազգային գրադարան»



NL0271915

7413

9162 1 н. 50 ч.

**Х. ШИРУМЯН**

Диспансеризация и борьба с малярией

Гиз. ССР Армении. Эривань 1935 г.